2001, ՓԵՏՐՎԱՐ Բ, ԹԻՎ 4 (96)

Հայաստանյաց Եկեղեցի

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

ՈՒՂՂԱՓԱՌՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ

Փետրվարի 21-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը ՀՅ Ազգային ժողովում ներկա գտնվեց Ուղղափառների եվրոպական միջխորհրդարանական վեհաժողովի շրջանակներում՝ Ուղղափառ ժողովուրդների միասնության միջազգային հիմնադրամի կողմից կազմակերպված «Եկեղեցին, պետությունը, հասարակությունը եւ ազգային վերակառուցման հայեցակարգի ճգնաժամը» թեմայով միջազգային կոնֆերանսի բացմանը:

Նորին Սրբությունը ողջունեց կոնֆերանսին մասնակից ավելի քան 20 եվրոպական երկրների խորհրդարանների ուղղափառ պատգամավորներին ու Ուղղափառ ժողովուրդների միասնության միջազգային հիմնադրամի ներկայացուցիչներին:

Միջազգային կոնֆերանսի մասնակիցներին ողջունեց նաեւ ՀՅ Աժ նախագահ Արմեն Խաչատրյանը: Ընդերգվեցին նույնպես Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի Երկրորդի, ՌԴ Պետդումայի նախագահ Գենադի Սելեզնյովի, ՌԴ կառավարության փոխվարչապետ Վալենտինա Մատվիենկոյի ողջույնի ուղերձները:

Ստորեւ ձեզ ենք ներկայացնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը:

Կամոքն Աստծո եւ Նրա ամենախնամ օրհնությամբ՝ Ուղղափառների եվրոպական միջխորհրդարանական վեհաժողովի հերթական կոնֆերանսն անցկացվում է Հայաստանում: Փրկչական երրորդ հազարամյակի սեմին առանձնահատուկ իմաստավորվում է ուղղափառ ժողովուրդների այս ասվածահաճո հանդիպումը եւ եկեղեցու երկխոսությունը: Խորհրդանշական է նաեւ, որ այս հավաքը՝ պետության ու հասարակության առնչությունների վերաբերյալ կարեւորագույն հարցադրումով, կայանում է Հայաստանում, այն երկրում, ուր 1700 տարի առաջ տրվեց այսօր ընդունվող հարցի ամենազորեղ եւ ամենագործնական պատասխանը: Տոնելով այդ պատմական նշանակալի իրադարձությունը՝ Հայաստանում հրիստոնության որպես պետական կրոն ճանաչման 1700-ամյա հոբելյանը՝ մենք տոնում ենք նաեւ հոբելյանն այն իրողության, որ 17 դար առաջ առաջին անգամ պետությունն ինքը հռչակեց պարզ մի ճշմարտություն. այն է՝ աշխարհիկ իշխանությունը չի կարող անտարբեր լինել իր երկրի հոգեւոր մթնոլորտի հանդեպ, իր հպատակների հոգեւոր աշխարհի ձեւավորման հարցում եւ, ուրեմն՝ անհրաժեշտություն է համագործակցությունը եկեղեցու հետ:

Ուղղափառների եվրոպական միջխորհրդարանական վեհաժողովը եւ Ուղղափառ ժողովուրդների միասնության միջազգային հիմնադրամը մեծ ու վսեմ առաքելություն են ստանձնել՝ իրենց նվիրական ծառայությունը բերելով հրիստոնեական առաքելության: Մենք քաջալերյակ ենք այդ կազմակերպությունների անձնվեր աշխատանքին, որով նրանք, սկսյալ 1993 թվականից, իրենց լուրջ ներդրումն են բերում՝ նպաստելով ուղղափառ ժողովուրդների միասնությանը, ինչպես նաեւ հրիստոնեական սկզբունքների արմատավորմանը աշխարհիկ իշխանության այնպիսի կարեւոր օղակում, ինչպիսին է պառլամենտը՝ որպես հավասարակշիռ ներկայացուցչությամբ իշխանության օրենսդիր մարմին: Անհնար է մերժել օրենսդիր իշխանության դերը հասարակական կյանքում: Ասված եւս իր ընտրյալ ժողովրդի հետ սկսեց գործել՝ ներկայացնելով նրան աստվածային Օրենքը, ընդ որում՝ Իր պատգամներն անմիջականորեն հայտնելով նախ եւ առաջ իշխանավորին՝ Մովսեսին:

Տարվող աշխատանքը հատկապես կարեւորվում է ուղղափառ հոգեւոր տարածքում, քանզի պատմական իրադարձությունների բերումով՝ 20-րդ դարի ընթացքում հատկապես այդտեղ՝ Արեւելյան եվրոպայում էր, որ ավերիչ գործունեություն ծավալեց մարտնչող անաստվածությունը՝ բռնության իր ողջ պետական մեքենայի հնարավորություններով հանդերձ: Պատահական չէ, որ այս համաժողովում ընդգրկված են հինգանկանում հեռկոմունիստական երկրների ժողովարանների ուղղափառ ներկայացուցիչները:

20-րդ դարը, սակայն, մեծ փորձության շրջան էր ողջ հրիստոնյա աշխարհի համար: Արեւելյան եվրոպայում ծավալված հակաեկեղեցական բռնությունների հետ մեկտեղ հրիստոնեական արժեքները լրջորեն աղճատվեցին նաեւ Արեւմտյան եվրոպայում: Ներկայիս հոգեւոր իրավիճակն աշխարհում իր վրա կրում է այդ չարագործությունների ու աղավաղումների ադեցալի հետքը: Ողջունելի է, որ այս իրավիճակը դարձել է լուրջ մտահոգության առարկա, ինչն արտահայտված է նաեւ այսօրվա հավաքի խորագրում. «Եկեղեցին, պետությունը, հասարակությունը եւ աշխարհի վերակառուցման հայեցակարգի ճգնաժամը»:

Հարգարժան ներկաներ, Մենք ուղղափառ խորհրդարանականների երկխոսության կարեւոր առաքելությունն ենք նկատում առկա այն միտումների կանխումը, որոնք համամարդկային արժեքները ենթարկում են քաղաքական ինչ-ինչ նկատառումների, այդ արժեքներից դուրս գցում դրանց հոգեւոր, աստվածատուր իմաստը, եւ որոնց հետեւանքն է ընտանիքի քայքայումը, բարոյականության անկումը, դաժանության ու բռնության անսահման դրսեւորումը, տկարի նկատմամբ անտարբերությունը, այսպես կոչված, «զանգվածային մշակույթի» համատարած քայքայիչ ներխուժումը, գլոբալիզացիայի այն բացասական արտահայտությունները, որ փաստորեն հանգեցնում են հասարակական կյանքում հոգեւոր-ազգային արժեքների սնորդասմանը:

Ուրախ եմ նշելու, որ Հայաստանի օրենսդիր մարմինը, ի դեմս Ազգային Ժողովի, մշտապես աջակցել է քաղաքական ու հոգեւոր հարցերը փոխադարձ միասնության մեջ տեսնելու այս աշխատանքին՝ գործուն մասնակցություն բերելով բոլոր հավաքներին Մինսկում, Սոֆիայում, Սալոնիկում եւ այլուր, ինչպես նաեւ վեհաժողովի քարտուղարության եւ հանձնաժողովների ամենօրյա գործունեության շրջանակներում:

Մենք ողջունում ենք Ուղղափառների եվրոպական միջխորհրդարանական վեհաժողովի եւ Ուղղափառ ժողովուրդների միասնության միջազգային հիմնադրամի բոլոր անդամ երկրներին, ինչպես նաեւ այսօր Հայաստանում համախմբված այս կոնֆերանսի բոլոր մասնակիցներին եւ առանձնացնելով Հունաստանն ու Ռուսաստանը՝ որպես այս ծանրակշիռ եւ լուրջ կարեւորություն ունեցող գործի նախաձեռնողների, սրտի բերկրանքով բերում ենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունը Չեզ: Թող Աստված զորավիգ եւ օգնական լինի բոլոր նրանց, ովքեր կիսում են մարդկության տագնապները եւ իրենց սրբազան պարտքն են համարում գործուն մասնակցություն բերել իրենց երկրի եւ համայն աշխարհի աստվածահաճո բարեկարգման գործին:

ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գարեգին Բ կաթողիկոսն ընդունեց Վրաստանի կառավարական պատվիրակությանը

Փետրվարի 17-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսն ընդունեց Վրաստանի պետնախարար Գեորգի Արսենիշվիլու գլխավորած կառավարական պատվիրակությանը:

Նորին Սրբությունն ուրախությամբ, գնահատանքով ու գոհունակությամբ անդրադարձավ Վրաց Ուղղափառ Եկեղեցու գահակալ Իլյա Երկրորդ կաթողիկոս-պատրիարքի եւ Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեի հետ ունեցած եղբայրական ու ջերմ հանդիպումները, որ տեղի ունեցան անցած տարի Հայոց Հայրապետի գահակալության առաջին իսկ տարում Վրաստան կատարած այցի ընթացքում: Այս առիթով Նորին Սրբությունը նշեց վրաց նախագահի եւ իշխանությունների պատրաստակամությունը ուշադրության կենտրոնում ունենալու հայկական պատմական հուշարձանները ու մասնավորապես Խոջիվանքը: Հայոց Հայրապետը գոհունակությամբ ու գնահատանքով նշեց նաեւ Հավլաբարի Կարմիր Ավետարան հայոց եկեղեցու վերականգնումն իրականացնելու վրաց իշխանությունների մատուցությունը:

Պրն Գ. Արսենիշվիլին, Նորին Սրբությանը ներկայացնելով հայաստանյան իշխանությունների հետ ունեցած հանդիպումների արդյունները, վստահաբար նշեց, որ դրանք իրենց բարի պտուղները կունենան երկու հարեւան երկրների բարեկամությունն առավել ամրապնդելու համար:

Քահանայական ձեռնադրություն Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում

Ավարայրի ճակատամարտում Վարդանանց քաջերի առաջին շարքերում էին նաեւ հայ հոգեւորականները՝ Ղեւոնդ Երեցի գլխավորությամբ, որոնք իրենց խոսքով ու նեկայությամբ քաջալերում էին հայ մարիկներին: Պարսից արքայի հրամանով նահատակվեցին նաեւ քաջարի հոգեւորականները, որոնց հիշատակության տոնը Հայ Առաքելական Եկեղեցին այս տարի նշեց փետրվարի 20-ին: Այդ օրը Ավարայրի ճակատամարտում սրբացված հոգեւորականների հիշատակը Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում նշանավորվեց քահանայական ձեռնադրությամբ: Հայ Եկեղեցուն եւ հավատավոր ժողովրդին ծառայելու կոչվեց նորաօծ եւս 5 քահանա՝ Տ. Իգնատիոս աբեղա Մալխասյանը, Տ. Հարություն քհն. Ծատուրյանը, Տ. Զենոն քհն. Բարսեղյանը, Տ. Թաթուլ քհն. Գասպարյանը եւ Տ. Ղեւոնդ քհն. Մայիլյանը:

Վարդանանց տոնը Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում

Փետրվարի 22-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում հանդիսավորապես նշվեց Վարդանանց տոնը: Սբ. Էջմիածնի Մայր տաճարում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի հանդիսապետությամբ մատուցվեց Սբ. Պատարագ: Պատարագիչն էր Տ. Գրիգորիս արք. Բունիաթյանը:

Վարդանանց տոնը Հայ Եկեղեցում նշանավորվում է նաեւ որպես Ամենայն Հայոց Գարեգին Բ կաթողիկոսի անվանակոչության օր: Այս առիթով հավատաց Սբ. Պատարագի Իջման Սբ. Սեղանի մոտ կատարվեց հայրապետական մաղթանք:

Օրվա հանդիսությունը Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ շարունակվեց Վեհարանի դահլիճում, որտեղ Նորին Սրբությունն իր օրհնությունն ու պատգամը տվեց ներկաներին: Օրվա խորհուրդը նշանավորվեց նաեւ մի քանի ուրախալի առիթներով:

Վեհափառ Հայրապետը վարդապետական լանջախաչեր նվիրեց Հայ Եկեղեցու երեք նոր վարդապետներին:

Նույն օրը Վեհափառ Հայրապետը Վազգենյան դպրանոցի դասախոս Սանդրո Բեհբուդյանին հանձնեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանը, որ Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակով շնորհվել էր նվիրյալ գիտնականին՝ Հայ Եկեղեցուն մատուցած ծառայության համար:

Պարգեւների արժանացան նաեւ Երեւանի հանրակրթական դպրոցների 4 աշակերտուհիներ, որոնց Վարդանանց հերոսամարտին նվիրված շարադրություններն արժանացել էին բարձր մրցանակների: Վեհափառ Հայրապետը սիրով ու օրհնությամբ նրանց հանձնեց ԱՄՆ-ում գործող «Վարդանանց ասպետներ» կազմակերպության կողմից սահմանված դրամական պարգեւները:

Տոնի ուրախությունն իր լրումին հասավ, երբ Վեհափառ Հայրապետը տեղեկացրեց, որ Հայաստանի Ազգային Ժողովն ընդունել է Հայ Եկեղեցու երկու կարեւորագույն՝ Վարդանանց եւ Թարգմանչաց տոները պետական տոների շարք դասելու առաջարկության նախագիծը:

Վարդանանց տոնին իրենց «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն» գրական-գեղարվեստական հայացքին էին նվիրել Գեւորգյան հոգեւոր ճեմարանի սաները: «Վարդանանց խորհուրդը» բանախոսությամբ հանդես եկավ ճեմարանի դասախոս պատմաբան Պետրոս Հովհաննիսյանը:

Գարեգին Բ կաթողիկոսի պաշտոնական այցը եկեղեցիների համաշխարհային խորհուրդ

Փետրվարի 23-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսն անդրանիկ պատշտոնական այցով մեկնեց Ժնեւ՝ որպես Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հյուր:

Ժնեւ մեկնելիս Նորին Սրբությունը երկօրյա կանգառ ունեցավ Մոսկվայում, որի ընթացքում առիթ ունեցավ անձամբ շնորհավորելու Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի Երկրորդին՝ անվանակոչության օրվա առիթով: Վեհափառ Հայրապետը հանդիպեց նաեւ մոսկվահայ համայնքի ներկայացուցիչներին:

Ժնեւում Հայոց Հայրապետը հանդիպումներ ունեցավ ԵՀԽ գլխավոր քարտուղար Կոնրադ Ռայզերի, ԵՀԽ ընդհանուր քարտուղարության, ինչպես նաեւ ԵՀԽ-ում Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչների հետ:

ԵՀԽ գլխավոր քարտուղարը բազմաթիվ անգամներ է այցելել Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, որի հետ համատեղ ԵՀԽ-ն բազմաթիվ սոցիալական եւ բարեսիրական ծրագրեր է իրականացնում Հայաստանում: Այսօր էլ Սբ. Էջմիածնում հաջողությամբ գործում է ԵՀԽ-ի երկու գրասենյակ:

Ժնեւից Նորին Սրբությունը մեկնեց Լոնդոն՝ ներկա լինելու մարտի 1-ին Բրիսանական գրադարանում բացված «Գանձեր՝ տաղանից» ցուցահանդեսին՝ նվիրված Հայաստանում հրատարակված գրականությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին: Վաչե եւ Թամար Մանուկյանների հիմնադրամի մեկնաբանությամբ կազմակերպված ցուցահանդեսում ներկայացվել են հայ եկեղեցական արվեստի նմուշներ Մայր Աթոռի, ինչպես նաեւ աշխարհի այլ թանգարաններից:

Հայոց Հայրապետին ուղեկցում են Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի միջեկեղեցական բաժնի տնօրեն Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը եւ Տ. Ավետիս աբեղա Սահակյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՎԱՏԱՄԱՐՏ, ՈՐ ԴԵՌԵՎԱՍ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Հայոց բազմադարյան կենսագրության էջերից ոչ մեկն այնքան խոր հետք չի թողել ժողովրդի ինքնագիտակցության մեջ, որքան 5-րդ դարը: Նախընթաց դարերում գրանցված հասարակական զարգացման փորձառությունը, քաղաքակրթության որոշակի ձեռքբերումները, հետագայում՝ հելլենիզմի դարաշրջանում, Հայասան ներթափանցած հունական մշակույթը, անշուշտ, զգալի առաջընթաց էին ուղենշել հայոց կյանքում, սակայն դրանք ոչ մի առնչություն չունեին հայ ժողովրդի՝ որպես մեկ հասարակական մարմնի մտածողության հետ: Ավելին՝ ստեղծված քաղաքական պայմանները, ինչպես նաեւ համընդհանուր հեթանոսությունն էլ իր հերթին լուրջ նախադրյալներ էին ստեղծել հայ ժողովրդի անխուսափելի ուծացման համար: Այս պայմաններում միակ ու ճշմարիտ ելքը քրիստոնեության ընդունումն էր, միակ ճշմարիտ Աստծո Լուսապսակին պատվիրելը: Սակայն քրիստոնեությունը պետական կրոն ճանաչվելուց մեկ դար անց դեռեւս երկրում պահպանվել էին բազմաթիվ հեթանոսներ, որոնց անհրաժեշտ էր ճշմարիտ հավատի բերել, մյուս կողմից՝ Արեւելքով մեկ տարածված հերձվածողական գաղափարներն էին մուտք գործել երկիր, որոնք լուրջ վտանգ էին սպառնում ոչ միայն ազգային կրոն դարձած առաքելաշունչ քրիստոնեական մեր հավատին, այլեւ ազգային հավաականությանը: Ոչ միայն ներկա, այլեւ ազգի վաղվա ու ապագայի՝ անորոշ, անհեռանկար թվացող վիճակը չէր կարող չանհանգստացնել հայոց հոգեւոր ու աշխարհիկ այրերին: Պետք էր զորեղ զենք, զենք, որ առավել լիներ, քան ռազմական ու նյութական հնարավորությունները, առավել, քան նույնիսկ հողը: Այդ զենքը սեփական գիր ունենալն էր: Գրերի գյուտը հնարավորություն տվեց ոչ միայն թարգմանելու, ժողովրդին հասկանալի դարձնելու Աստվածաշունչ մայրենի ու հայրաբանական գրականությունը, այլեւ դրանց կողքին ստեղծելու սեփական, ազգային գրականություն՝ ընդգրկելով ժամանակին բնորոշ ու ընդունելի գիտամշակութային բոլոր բնագավառները ու ճյուղերը: Կարճ ժամանակ անց երկրում ստեղծվեց ազգային հոգեւոր ու մշակութային զարգացման անանխընթաց ու միանգամայն ինքնատիպ վերելք լավագույնս նպաստելով ժողովրդի ինքնաճանաչմանն ու ինքնագիտակցության միասնականությանը: Չնայած ընկավ Մեծ Հայքի թագավորությունը, եկիրը բաժանվեց Բյուզանդիայի եւ Պարսկաստանի միջեւ, բայց կար ու մնում էր ազգային հոգեւոր-մշակութային ինքնասեղծ ու այլեւս անշրջելի դիմագիծը: Եվ այդ հայ քրիստոնյայի դիմագիծը կորցնելու վտանգն առավել մտահոգիչ էր մեր փառավոր հայրերի համար, քան երկրի մասնատումը, քան սեփական կյանքն ու կալվածքները: Վարդանանց հերոսամարտը, որ մեր պատմության մեջ բարոյական հաղթանակի գրանցում ստացավ, եթե ոչ միայն, ապա նախ եւ առաջ վասն ազգի հոգեւոր լինելության էր, եւ որն էլ կանխորոշեց մեր հետագա արժանապատիվ երթն առ այսօր: Այդ պատերազմում շատ-շատ ազնվաբարո հայորդիների հետ հերոսի մահով ընկան նաեւ 9 ավագ նախարար, որոնցից մեկն էլ, պատմիչի բնորոշմամբ, «Հառաջադեմ» Գարեգին Արվանձտյանն էր:

Հայոց Եկեղեցին, որ ազգային ազատագրական շարժումների ոչ միայն գաղափարախոսն էր, այլեւ ակտիվ մասնակիցը, Վարդանանց հերոսներին ատխարհիկ թե հոգեւորական, սրբացրեց: Եվ դարեր շարունակ նրանց հիշատակը վկայակոչում է նաեւ Եկեղեցու սրտասավորների ձեռնադրության ժամանակ: Թե՛ կուսակրոն եւ թե՛ ամուսնացյալ բազում քահանաներ անցյալում եւ այսօր կրում են նրանց՝ Վարդանանց նահատակների սուրբ անունները: Այսպես, 1972 թվականին, Վարդանանց տոնի կապակցությամբ տեղի ունեցող քահանայական ձեռնադրության ժամանակ Կտրիճ սարկավագ Ներսիսյանն անվանակոչվեց Գարեգին աբեղա, հետո վարդապետ, եպիսկոպոս, արքեպիսկոպոս եւ վերջապես՝ 1999 թվականին, Ամենայն Հայոց Գարեգին Բ կաթողիկոս: Ժողովուրդն ասում է. «Անունը դնելիս հոգին էլ հետն ես դնում»: Ընդհանրապես դժվար է ասել, բայց այս դեպքում եւ առաջադիմական, եւ հերոսական, եւ հայրենասիրական ոգին, հիրավի, Ամենայն Հայոց 132-րդ Հայրապետին բնութագրող հատկանիշներից են: Ռազմական ոչ մի հաղթանակ չի կարող ազգի հարատեւման, բարգավաճման իրական խթանիչ ուժ հանդիսանալ, եթե այն չի ամրագրվում հոգեւոր ու մշակութային, գիտական ու կրթական ձեռքբերումներով (հայերիս պարագայում առավել քան): Այս բնագավառներում լուրջ գործունեությունն ծավալելն ու հաղթանակ արարելը ոչ պակաս դյուրին գործ է: Իսկ Ամենայն Հայոց գահակալին մենք ճանաչում ենք դեռեւս Արարատյան հայրապետական թեմից՝ Վազգենյան դպրանոցի, Երեւանի հայորդյաց երեք տների, մանրանկարի դպրոցի հիմնադրումով, նոր եկեղեցիների կառուցումով ու նորոգումներով՝ մնացյալ բազում հայրենանոպաս, եկեղեցաշեր ու հոգեշեն գործերը չհաշված:

Վարդանանց պատերազմի խորհուրդն ամաչ չունի. այն մշտապես հարատեւում է, մշտապես, քանի դեռ ազգը չի հաշտվել իր դարի ու հանճարի պարտության հետ: Խիստ դժվար է պատկերացնել Գարեգին Բ կաթողիկոսին պարտվելիս:

Այսօր, վկայակոչելով Վարդանանց հերոսական այրերի սուրբ հիշատակը, առիթ ու պատեհություն ունենք շնորհավորելու նաեւ Ամենայն Հայոց Հայրապետին՝ իր անվանակոչության տոնի առթիվ եւ մեկ անգամ եւս աղոթելու, որ ողորմած ու սքանչելի մեր Տերն իր ամենակալ Աջը հովանի անի մեր հոգեւոր տան վրա, անսասան պահի Մայր Աթոռը, երկար կյանք, ուժ ու կորով պարգեւի Հայոց Հայրապետին, որպեսզի նրա հովվապետությամբ՝ Լուսավորչի անմար կանթեղի լույսը սիրով ու նորոգ հավատով բաբխվի Հայոց նորանկախ հողի ամեն մի հյուլեին ու ազատորով մեկ սփռված մեր հայրենակիցներին:

Գարեգին Արվանձտյան նախարարից մինչեւ Գարեգին Բ կաթողիկոս եւ գալիք բոլոր ժամանակներ, թող օրհնյալ լինեն օրն այս եւ խորհուրդը նրա:

ԱՍՏՂԻԿ ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ

Ավարայրի ճակատամարտի 1550-ամյակը

ԱՎԱՐԱՅՐԻ ԼՈՒՍԱԲԱՑԸ

Հայոց ազատութեան ոգու մարմնավորումն էր ճշմարիտ ասվածաբեռությամբ հոգելցված հայկական Ուխտի ժառանգորդ Վարդանանց միաբանության Ուխտը: Եղիշեն գրել է. «Մեծ է սերն Աստծո, քան ամենայն մեծություն երկրավոր. եւ այնոքես աներկյուղ է առնում մարդկանց՝ իբեւ անմարմին զորքերը հրեշտակաց»: Վարդան Մամիկոնյանն այսոքիսի հոգեւոր նեռնչանով 451 թ. հայոց զորքն առաջնորդեց դեպի Ավարայր:

Սղարաքես Վարդան Մամիկոնյանը հայրենաշունչ կոչով դիմեց հայոց զորքին. «Բազում դաստերազմներ եմ մղել ես, եւ դուք էլ ինձ հետ... Արդ, աղաչում եմ ձեզ, ով իմ քաջ նիզակակիցներ... չերկնչեմք ու չվախենանք... եւ ոչ էլ մահկանացու մարդու ահռելի սրի դեմ թիկունքներս դարձնենք, որպեսզի եթե Տերը հաղթությունը մեր ձեռքը տա, ոչնչացնենք նրանց զորությունը, որպեսզի բարձրանա ճշմարտության կողմը, իսկ եթե հասել է ժամանակը մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, ընդունենք ուրախ սրտով, միայն թե արիության ու քաջության մեջ վախկոտություն չխառնենք»:

Վարդան Մամիկոնյանը բոլոր կողմերից կարգավորեց այրուձին եւ ամբողջ զորքը բանակեց Ավարայր գյուղի մոտ գտնվող դաշտում: Արագ գավառով հոսող Տղմուս գետի ափին:

Վճռական ճակատամարտին նախորդող գիշերը Ղեւոնդ երեցը ոգեշնչում էր ազատամարտիկներին նրանց հիշեցնելով նախախնամ Քրիստոսի ծնունդն ադրած մեր նախնիների՝ Հայկի եւ նրա սերունդների եւ այլ սրբերի մասին. «Բոլորդ հիշեցե՞ք մեր առաջին հայրերին, որոնք նախախնամ Աստծու Որդու ծնունդը ադրել են զանազան ժամանակներում... Դուք՝ Սուրբ Հոգուց ճշմարտապես ծնվածներդ, Աստծու որդիներ եք եւ Քրիստոսի ժառանգակիցներ... եվ քանզի ով ճշմարտությամբ միացած է Քրիստոսի սիրո հետ, հոգու աչքով տեսնում է Իմանալի Արեգակի ճառագայթների աներեւույթ հստակ Լույսը»:

Ղեւոնդ երեցը եւ հայոց զորքում եղած մյուս հոգեւոր հայրերը Սուրբ Պատարագի սեղան են կանգնեցնում եւ կատարում ամենասուրբ խորհուրդը: Նրանք պատրաստում են նաեւ մի ավազան եւ ամբողջ գիշերը մկրտում չմկրտվածներին եւ լուսաբացին սուրբ հաղորդություն ընդունում: Աստծո իմաստությանը հաղորդակցված Հայոց զորքը, Ավարայրի լուսաբացի սուրբ խորհրդով հոգելցված, գնաց գիտակցված ինքնաթատարագի ճանապարհով հանուն հայրենիքի ազատության, քանզի «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է»:

ԷԴՈՒԱՐԴ ԻՍԱԲԵԿՅԱՆ. «ԱՎԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ» (1953)

451 թ. մայիսի 26-ի լուսաբացին Վարդան զորավարը կարգավորեց զորքը ճակատ կազմելով Տղմուս գետի ափին՝ դարսից զորքի դիմաց:

Ավարայրի ճակատամարտն սկսվեց երկու կողմերի ահարկու հարձակումով: Հայոց հեծելազունդը քաջ Վարդանի գլխավորությամբ անցավ Տղմուս գետը եւ մեծ զորությամբ շարունակեց իր հարձակումը: Աստիճանաբար բախվելով իրար երկու կողմից էլ բազմաթիվ զինվորներ վիրավորվեցին: Երբ Վարդանը տեսավ, որ դարսից ուժերն ընկճեցին հայոց զորքի ձախ թեւը, արագորեն նետվեց այնտեղ եւ, ջարդելով հակառակորդի աջ թեւը, հետեւ եւ շատերին ոչնչացրեց: Հայոց զորավարը թշնամու շարքերում այնպիսի իրարանցում առաջացրեց, որ նույնիսկ դարսից մասյան գունդը քայքայվեց եւ սկսեց փախչել:

Շարունակությունը էջ 5-ում

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ ՕՇԱԿԱՆԻ ՍԲ. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Փետրվարի 21-ին Գեւորգյան հոգեւոր ճեմարանում տեղի ունեցավ վարդապետական թեկնածուի դասընթացություն. Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Եզրաս աբեղ. Սերոբյանը, Տավուշի մարզի հոգեւոր տեսուչ Տ. Դերենիկ աբեղ. Դավթյանը եւ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ աբեղ. Խաչատրյանը ներկայացրեցին իրենց գիտական աշխատությունները՝ ազգային-եկեղեցական հոգեւոր ճեմարանում տեղի ունեցավ վարդապետական թեկնածուի դասընթացություն. Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Եզրաս աբեղ. Սերոբյանը, Տավուշի մարզի հոգեւոր տեսուչ Տ. Դերենիկ աբեղ. Դավթյանը եւ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ աբեղ. Խաչատրյանը ներկայացրեցին իրենց գիտական աշխատությունները՝ ազգային-եկեղեցական հոգեւոր ճեմարանում տեղի ունեցավ վարդապետական թեկնածուի դասընթացություն. Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Եզրաս աբեղ. Սերոբյանը, Տավուշի մարզի հոգեւոր տեսուչ Տ. Դերենիկ աբեղ. Դավթյանը եւ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ աբեղ. Խաչատրյանը ներկայացրեցին իրենց գիտական աշխատությունները՝

արժանանալով ինչիչ հանձնաժողովի բարձր գնահատականին ու վարդապետական աստիճանի շնորհմանը: Իսկ փետրվարի 22-ին Արագածոտնի առաջնորդանիստ Օշականի Սբ. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում նրանք նվիրական օրհնություն ստացան ու վերահաստատեցին իրենց հոգեւոր Ուխտը՝ ընդունելով Հայ Առաքելական Եկեղեցու վարդապետական չորս մասնավոր աստիճանները:

Սբ. Մեսրոպ հնամենի եկեղեցու կամարների ներքո եւ սուրբ Ուսուցչի անմահ հոգու հովանավորությամբ, վեղարները խոնարհած, նրանք ծնրադրել էին համեստ աշակերտների օրհնակով՝ ստանալու համար վարդապետի նվիրական աստիճանները: Հնչեցին դարերի ընթացքում մեր եկեղեցական հայրերի կողմից սահմանված աղոթքները, ընթերցվեցին ավետարանական համապատասխան հատվածներն ու սաղմոսները, երգվեցին հոգեոր-հոգեոր շարականները: Նախագահությամբ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերշ. Տ. Նավասարդ եպս. Կճոյանի եւ հոգշ. Տ. Արարատ ծ. վրդ. Գալթագճյանի հոգեւոր վկայությամբ՝ նրանք ստացան վարդապետական գավազան:

Հանդիսավոր արարողության ավարտին նորընծա վարդապետներն իրենց առանձնական աղոթքը կատարեցին Սբ. Մեսրոպ Մաշտոցի շիրմի առջեւ: Խորն է վարդապետական տվչության խորհուրդը. հավատի վերաքննության կենդանի օրինակ է այս իրողությունը: Ճշմարիտ էր Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանի խոսքը. «Դեռեւս բողբոջում են Հայ Եկեղեցու ճյուղերը, եւ հավերժ է մեսրոպյան սրբազան ավանդությունը»: Արդյոք մենք կարո՞ղ էինք ունենալ այս հաջողությունը, եթե մեզ հետ չլիներ Աստծու օրհնությունը, եւ մեզ չառաջնորդեր կյանք պարգեւող նախախնամությունը:

Հարություն սրկ. Հարությունյան

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնությամբ եւ նախագահությամբ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 2001 թ. փետրվարի 19-21-ը տեղի ունեցավ միաբանական համագումար: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ընդհանուր միաբանությունից (թվով 65 հոգի) միաբանական համագումարին իր մասնակցությունն էր բերել կուսակրոն 51 քահանա:

Համագումարի նպատակն էր համագործակցության մթնոլորտ ստեղծել՝ եղբայրական փոխհարաբերությունների սերտացման ու հարատեւության, համատեղ գործունեության ծավալման եւ միաբանության միասնական ջանքերն ու աշխատանքները լավագույնս արդյունավորելու համար՝ ի զորացումն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Հայ Եկեղեցու:



Խորհրդածությունների եւ ինքնակումների հիմք ծառայեցին «Ի՞նչ է քահանայությունը» (Տ. Նարեկ վրդ. Պերթերյան) եւ «Լուսավորչի կանքեղը ուղեցույցն է մեր առ Աստված» (Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյան) զեկույցները:

Միաբանական համագումարի մասնակիցներն անհրաժեշտ նկատեցին եւս մեկ անգամ շեշտել կարեւորությունն ու արժեքը միաբանության նշանակության՝ վերակազմավորելու եւ վերակազմակերպելու ընդհանրական միաբանական կյանքը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության համագործակցությունն ու գործունեության ծավալումը կարող է արժանապատվությամբ եւ ներդաշնակությամբ ընթանալ միայն այն դեպքում, երբ դրանք խարսխվեն իրական եղբայրասիրության, հոգեւոր-բարոյական արժեքների վրա:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը պետք է աշխուժացնի իր գործունեությունը յուրաքանչյուր միաբանի կյանքում՝ առնչված թե՛ բարոյական, թե՛ հոգեբանական, թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեւոր եւ թե՛ նյութական ոլորտներին:

Այս պատճառով համագումարի մասնակիցներն անհեսածգելի եւ առաջնահերթ անհրաժեշտություն են համարում միաբանական հանձնաժողովի ստեղծումը, որը կգրաղվի վերոհիշյալ խնդիրներով:

Համագումարի մասնակիցները համոզված են, որ միաբանական հանձնաժողովը պետք է իրականացնի փոխհարաբերությունների եւ փոխհամագործակցության սերտացում՝ այդ ճանապարհով նախահիմք ստեղծելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կանոնադրական միաբանության ձեւավորմանը: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ մասնակիցներն անհեսածգելի անհրաժեշտություն համարեցին նաեւ համագումարների շարունակականությունը, կարեւոր եւ կենսական հարցերի վերաբերյալ խորհրդակցությունների ու ինքնակումների զարգացումը: Համագումարի մասնակիցներն այցելեցին Հայաստանի ավանդական նշանավոր ուխտատեղիները՝ Օշական եւ Խորվիրաբ՝ նորոգելով իրենց հավատի ու հավատարմության ուխտն առ բարձրյալն Աստված, ով համագումարի ողջ ընթացքում հովանավորեց նրանցից յուրաքանչյուրին՝ համբերություն, իմաստություն, սեր եւ միություն նեղնչելով՝ ի փառս Ամենասուրբ Երրորդության, ի զորացումն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ ի պայծառություն հայ ժողովրդի հոգեւոր վերաբնության:

Դիվան միաբանական համագումարի

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

«Արդարեւ, Ես եմ Քո Տէր Աստված,
որ բռնել եմ Քո աջ ձեռքից,
որ ասում եմ Քեզ, թե՝
«Մի՛ վախեցիր, Ես կօգնեմ Քեզ»
(Եսայի ԽԱ 13):

Սրարիւ Աստված, Հայր Ամենակալ.
Երկրում եմ Քեզ. տէր ողորմութիւն.
Փոքրա՛ ընդարձաք եղիր բշվառիս.
Քանզի հուզումից ու տագնապներից ասասիր փարանամ՝
Չեմ կարողանում շարժել անվտահ. ծանրախոս լեզուս:
Պապակ շուրթերս ծարաւի են Քո կենասու խոսքին.
Եվ խոցոտվում է հոգիս երկյուղից.
Երբ գիտակցում եմ մեծությունը Քո՝
Ամենեւն Սեպհոր.
Քանզի անարատ գարշությունը իմ
Դու՝ այս առավոտ լրեցիր սիրով՝ Քո ամենայիր.
Եվ ***«Կերակրեցիր հացողդ երկնային,***
Ընկալ տվեցիր արյունդ Աստծո:
Ընտանեացիր անմարդեանի անհասանելի հաս,
Թույլ տվեցիր, որ աչքս երկրային
Հանդարտակորեն նայի դեպի Քեզ.
Պարուսծվեցիր Քո փառի լույսով,
Քեզ մոտեցրեցիր անմահոր յեռոիս մասներն
հոգանցոր,
Մահացու մոխրիս հագցիր որպես լույսի
ճառագայթ,
Քո Հորը հգոր, օրհնյալ, սեպհոր,
Մարդասիրաբար հայր կնքեցիր անարժան անչիս»
(Գր. Նարեկ. Բան Ե):

Արդարեւ.
օրհնյալ.
գովյալ
եւ
փառավորյալ ես.
Տէր Ամենակալ:

Բայց ինչ ի՞նչ օգուտ
Այս ինքնաբխյան անսիրտ խոսքերից.
Երբ լոյս են նրանք. որ դեմ հանդիսման
կանգնած են իմ դեմ
Եվ արդարական ու արդրական խոսքերի փոխան
Խոնարհ հայացքով հեռանում են իմ մտքին անհասանաս.
Որ ստուերներում ու չի հասանվում
Սպեստարանի Ճշմարտության մեջ.
Որ առավելաբար շտապեցնում է. բան թե քարոզում:
Սիրելիներ իմ.
Որ հավատվել եք այս սուրբ տաճարում.
Երդում եմ Քեզ.
Ձեր հոգիների լույս խոսքերից
Խնկաբույր արդրի մատուցեք Աստծուն
Ու մեղավորիս մաղթեք բողոքում
Եվ ապա խնդրեք ոտ. կարողություն.
Որպեսզի եւ ես արժանի լինեմ աչալուրջ դնել
մեր հոգիների Կենասու Փրկչին.
Որպեսզի եւ ես իմ զալիք էլանիով.
Իմ նախորդների նմանողությամբ.
կատարեմ կամքը իմ Երկնավոր Հոր.
Որպեսզի ոչ թե ամենարանեմ լոկ խոսքով միայն.
այլեւ գործությամբ (հմմտ. Ա Կորնթ. Բ 4-5):
Իսկ թե Բարեյոյալ հոգանի լինի
Եվ Ձեր աղոթքի լոյս մինչեւ դրությամբ
Ինչ տա ձեռքդ լուսավորության.
Ապա առժանայն թե՝ դուք եւ թե՝ ես
Պիտի հրամեցնենք մեծ հարությամբ.
Դուք՝ Նրա սիրո անհուն բերկրանքով.
Իսկ ես էլ՝ Նրա ողորմածությամբ:

Փետրվարի 22-ին՝ Աստվածածնի սուրբ հանդիսավորության վերանորոգման կապակցությամբ Հաղարծնի եկեղեցիներում իրենց անդրանիկ Դատարանը մատուցեցին նորընծա քահանաներ Տ. Սկրտիչ աբեղա Ստեփանը, Տ. Մկրտիչ աբեղա Դոռոյանը, Տ. Զաքարեի աբեղա Սանդուխտը եւ Տ. Գեորգ աբեղա Սարգսյանը:

Սկրտեւ չեղ ենք հերթագրվում Տ. Մկրտիչ աբեղա Դոռոյանի բարոյը՝ խոսված Ս. Գարեգին եպիսկոպոսի:



Եվ արդ. Սրարիչ.
Սուրբ.
Ամենաբարի՛.
Արդյոք ո՞ւմ գովեմ.
Որպեսզի օրհնեմ այս շնորհաշատ
խմասարարեմ երախիտեսիս:
Քեզ գովելը. Հզո՛ր.
Վա՛ր է մարդային կարողությունից.
Ուստի խնդրում եմ. թույլ տուր
Մեծարել Նրան. ով Քո Օծյալն է
Եվ հոգեծնողը մեր հոգիների:
Նա է ինչ ծնել հոգեւոր խոսքով.
Իմ մանկությունից սկսել է հոր պես.
Հոգատար եղել դայակի նման
Եվ խնամել է՝ որպես այգեպան:
Դու՝ Խնամատարիս Անքմբռնելի.
տնօրինել ես.
Որ մարդիկ կշռեն գործերը մարդկանց.
Իսկ այդ գործերը օձող հասաբ ծածուկ ես պահել.
Քանզի գիտեիր, որ ***«մարդու միտքը իր մանկությունից ընկեր է չարին»*** (հմմտ. Ծննդ. Ը 21):
Բայց որդրմությունդ խիստ առատացավ
ինչ վրա. Տեսնող.
Քանզի նախապես տես հասաբ
Եվ ապա միայն գործերը Նրա:
Եվ էլ ավելի Դու որդրեցիր
ինչ՝ անողորմիս.
Երբ հոգեպական դաշտեցիր Նրան.
Բայց չէ՞ որ. Բարեյոյալ. ես իրականում
Ամարան վարչական կոչվելու նույնիսկ իրավունք չունեմ:
Իր վարչը շատ է.
խնդ՝ խիստ նվազ:
Թեեւ այս գիտեմ.

Բայց եւ խնդրում եմ.
Արա՛ Երկնավոր.
Այն պտուղները. որոնք երբեք. երբ ամբարեմ
Երկնային Քո սուրբ օթեւաններում.
Հավասարապես համարիր նաեւ Քո Օծյալինը.
մարդասեր Փրկիչ:
Եվ արդ. որպեսզի չլինի այնպես.
Թե մարդն է մարդուն պատիվներ տալիս.
Թողնենք խոսքերը զովաբանության
Եվ դառնանք նրանց.
Ովքեր լոյս կանգնած այս լույս խոսքերում՝
Իրենց լրությամբ պատգամում են ինչ.
«Հավատքությունը չի շարաշախում, քանզի այն չի է որդրմածությամբ»:

Արդ. ի՞նչ խարդեմ. երբ ոչ հավաս.
Որ անհասությունը փոխում է հույսի.
Ակնությունը՝ որդրմածության.
Նեղարտությունը՝ մեծահոգության.
Նախանձը՝ սիրո.
Եվ երկնապատկում
պատահությունը Բարեյոյի հանդեպ:
Հավատն անասան առհավաստյա է Աստծո նմանության
Եվ նախապայման ճշմարիտ սիրո.
Չէ՞ որ գրված է.
«Երբ հավատաս, նաեւ կարեւ,
Որով կիրառաս եւ անձերդոյդ իր պարգեւներին»:
Արդ. ո՞վ հավատաց եւ վարչ չատացավ
Կամ ո՞վ վստահեց ու չարարացավ:
Մի՞թե պեկոռ ծովի վրայով Վենը չքայլեց.
Կամ Երիոովի կույրը չտեսա՞վ.
Այդ դեպքում հապա
Ինչո՞ւ գրվեցին իրախուսական խոսքերը պաշտելի.
«Ով հավատում է, հնարավոր է նրան ամեն բան» (հմմտ. Մարկ. Թ 22):

Ինչո՞ւ եմ գալիս մեմ Աստծո տաճար.
Ինչո՞ւ աղոթում
Եվ կամ ինչո՞ւ եմ խոր բարեպաշտի կեցվածք ընդունում:
Երեթ գալիս եմ լոկ նրա համար.
Որ մեր հարեւն են այդպես պատվիրել.
Եվ կամ գալիս եմ մեր ներկայությամբ
Դատապարտելու մեր մերձավորին
Կամ էլ փասելու.
Թե մենք սիրում են մարդասեր Աստծուն.
Բայց իրականում հեռու եմ մնում Նրա գործերից...

Խնդրում եմ Նրան.
Խնդրում եմ մեմ մեզ.
Եվ ինքնախարության մոլորյով վարված՝
Մեր լոյս ու նաեւ վարվեցողությամբ
ասում եմ մարդկանց
Եվ զովաբանում մարդն ու նախանձը.
Որ հոդակված է սուտ արդարությամբ՝
չնապաշտությամբ:
Արդ. սիրելիներ.
Մենք ավելին եմ. քան ինձգությունը.
Մենք ավելին եմ. քան կեղծությունը.
Քանզի պատկերն եմ մեր Երկնավոր Հոր.
Ով Մեր է համակ եւ Որդրմություն:
Նա մեզ պատվիրեց. թե՝
«Որդրմությունն եմ չեզնից կամենում եւ ոչ երբեմ՝ զոհ» (հմմտ. Մատթ. Թ 13):
Իսկ մենք զոհում եմ մեր մերձավորին՝
Փոխանակ նրան միսիրարեմ.
հույս ու լույս տալու:
Նա Թեզ առավ մարդու կերպարանք.
Որպեսզի բուժի արտոյ բեկվածին.
Ակնարանի հուսահատյալին.
Լույս տա խամրածին.
Հույս տա բեկածին:

Նա աշխարհ եկավ.
Որպեսզի մարդը երկինք վերանա:

Արդ. սիրելիներ.
Սիրեցեք մարդկանց.
Սիրեցեք արտանց.
Սիրեցեք հոգով.
Հոգ չէ. որ նրանք չգիտեն այնքան.
Որքան դուք գիտեք.
Հոգ չէ. որ նրանք անհոգ են ապրում.
Մինչ դուք հոգնում եք:
Սիրեցեք նրանց առանց որեւէ ակնկալության.
Սիրեցեք անկեղծ երկնային սիրով
Եվ հավատացեք Ձեզ էլ կարեւոր անասնանորեն:
«Մարդ գոյության հանձարն է միակ,
Սիրուն հակառակ ամենեքին էլ չսիրելը չէ,
մահն է պարզապես»:
Նա. ով չի սիրում արարածներին
ու իր նմանին.
Ինչպե՞ս կարող է սիրել Արարչին:
Նա. ով չի սիրում.
Թեկուզ եւ համակ գիշերները ողջ
Իր արցունքներով բրջի մահիճը.
Չի՛ զվարթացնի բշվառ իր հոգին.
Չի՛ տանի Նրան. Ով կենդանի է հավիտենաբար.
զի ինքն է մեռած:

Արդ. ասա՛ խնդրեմ.
Մի՞թե մեռածը կարող է տանել
Եվ կամ ծիծաղել Լույսի տեսությամբ:
Բնավ. ոչ. երբեք:
Ուստի խնդրում եմ.
Խոնարհեցեք մի պահ.
Թե ինչո՞ւ ասվից. «Սիրեցե՛ք միմյանց» (Հովհ. ԺԳ 34):
Խնդրում եմ դարձյալ.
խոնարհեցեք նորից.
Արդյոք չե՞ք կարող սիրել այնքան շատ.
«Որպեսզի իսկույն հալվի ամեն մեղք,
Դեղը հալածվի, հանցանքը ջնջվի,
Կապանքը խզվի, խոտանվի շղթան,
Մահացածները կենդանանձկեմ,
Խոցը բժշկվի, վերքն առողջանա,
Վերանա ամեն ապականություն,
Թափթին ընկերի, ողբը նահանջի,
Խավարը փախչի, մութը վերանա, գիշերը գնա,
Շարիքը չէվի, տագնապն հեռանա,
Հուսահատությունն հալածվի անհետ,
Եվ բազավորի Մեր ամենակար....»
(հմմտ. Գր. Նարեկ, Բան ԽԱ):

Ստեղծ. Հզո՛ր. ասասիկ դալիացան.
Եվ խոսքս հասավ վերջնասահմանին.
Ուստի վերջին Քեզ պիտի դիմեմ.
Թագավոր Ամենի.
Աղերսեմ սերը Քո ամենաառատ:
Գրա՛. Որդրմածդ.
Բազում մեղքերով խոցոտված հոգուս:
Առաքիր երկնից ցողդ երկնային՝
Ստիպ պապակած անդաստանները արբուցանելու:
Պահապան կարգիր իմ անչի վրա
Այն մեղրամեղուր սուրբ հոգիներին.
Որոնք մշտապես՝
գիշեր թե ցերեկ.
Տնում են մարդկանց երկինք բերելու
Եվ Քո հարազատ հանդեսների մեջ երգամեկցնելու.
Քանզի ***«Բոլորի հանդեպ բարգործ եւ, Տե՛ր,***
Միակ Թագավոր, օրհնյալ ի բարդունս,
Հավիտյանների բոլանդակ. ամեն»
(Գր.Նարեկ. Բան ԼԱ):

Տ. Մկրտիչ աբեղա Պողոսյան

«ՀԱՅ-ՌՈՒՍ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆ ՍԿՍԵՑ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի եւ Համայն Ռուսիո ու Մոսկվայի պատրիարք Ալեխսի Երկրորդի օրհնությամբ՝ փետրվարի 13-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում իր անդրանիկ նիստը գումարեց «Հայ-ռուս եկեղեցական երկխոսություն» հանձնաժողովը: Ռուս Ուղղափառ եկեղեցու պատվիրակությունը գլխավորում էր Կալուգայի եւ Բորի արքեպիսկոպոս Կլիմենտը, Հայ Առաքելական եկեղեցու ներկայացուցչական խումբը գլխավորում էր միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Տ. Եղնիկ եպիսկոպոս Պետրոսյանը:

Ռուս Ուղղափառ եկեղեցին 2000 թ. հոբելյանական եպիսկոպոսական վեհաժողովում ինքնակել է մեր ժամանակներին բնորոշ զանազան խնդիրների հանդեպ եկեղեցու դիրքորոշման հարցերը եւ վավերացրել մի փաստաթուղթ՝ «Սոցիալական դոկտրինների հիմունքները» վերնագրով, որն էլ անդրանիկ երկխոսության նյութն էր: Եռօրյա խորհրդակցական ժողովում ինքնակվեցին հետեւյալ հարցերը.

1. Եկեղեցի եւ պետություն, հրաստնեական էթիկա եւ աշխարհիկ իրավունք, հանցագործություն, պատիժ.

2. Եկեղեցի եւ ազգ, էթնիկ գործոնը, աշխարհիկ գիտություն, մշակույթ, կրթություն.

3. Բարոյականության հարցեր. առողջություն, կենսաէթիկայի եւ բնապահպանության որոնքլեմներ.

4. Եկեղեցի եւ խաղաղականություն, աշխատանքը եւ նրա պտուղները, սեփականություն, պատերազմ եւ խաղաղություն, միջազգային հարաբերություններ:

Զեկուցումներով հանդես եկան Ռուս Ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչներ պրոֆ. Ա. Զուբովը, ավագ քահանաներ Ն. Բալաշովը, Վ. Ցիտիլը, Վ. Չաքլինը, որոնք ներկայացրին ինքնակվող հարցերի վերաբերյալ Ռուս Ուղղափառ եկեղեցու դիրքորոշումը: Հայ Առաքելական եկեղեցու դիրքորոշումը ինքնակվող հարցերի վերաբերյալ ներկայացրին Տ. Միխայել ծ. վրդ. Աջառիանը, Գեւորգույն հոգեւոր խորհրդի անդամ պրոֆ. Ռաֆայել Պաղայանը, գիտությունների դոկտոր Կարեն Նազարյանը, Սերժ սարկավագ Մայիլյանը:

Երկխոսության մասնակիցները չափազանց օգտակար համարեցին Ռուս Ուղղափառ եկեղեցու եւ Հայ Առաքելական եկեղեցու միջեւ երկխոսության շարունակությունը եւ ընդարձակումը՝ ի բարորություն մեր ժողովուրդների, որոնցի Տիրոջ ողորմությամբ «խաղաղությամբ եւ հանդարտությամբ վարենք մեր կյանքը, կատարյալ ասվածոպաբությամբ եւ արքությամբ» (Ա Տիմ. Բ 2): Հանդիպման մասնակիցներն ուրախությամբ արձանագրեցին այն փաստը, որ ինքնակվող բազմաթիվ հասարակական կարեւոր խնդիրների վերաբերյալ երկու կողմերը միանգամայն համախոհ էին:

Ռուս Ուղղափառ եկեղեցու պատվիրակությունն այցելեց Հայ Առաքելական եկեղեցու հին վանքերն ու եկեղեցիները, եղավ Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցի, Երեւանի պետական համալսարանի ասվածաբանական ֆակուլտետի, Երեւանի Արաբկիրի հայորդյաց տան, «Շողակաթ» հեռուստասուդիայի, ԵՀՏ Կլոր սեղանի հայասանյան գրասենյակի հյուր:

Անդրանիկ երկխոսության ավարտին ստորագրվեց համատեղ հայտարարություն:

Տ. Ղեւոնդ քհն. Մայիլյան

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՐԺԷՔԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ

Սկիզբը՝ նախորդ համարում

Գ. Բարեկոռգումը՝ էական պահանջ

Ստոյգ է, որ առաքելական շրջանի եւ այսօրուան Եկեղեցին նոյնը չէ եւ չի ալ կրնար ըլլալ: Ինքն իր մէջ չզարգացող որեւէ մէկ հասատութիւն, միեւնոյն է, ասուածային թէ մարդկային, որ ճգնութեամբ եւ հեռանկաս իմաստութեամբ չի յարմարիր ժամանակի եւ կեանքի փոփոխութիւններուն, հասարակարգին եւ ընկերութեան հետ, որուն մէջ ինքն կը գտնուի, չ'արդիր այն զարգացումը, զորս կը պահանջուի, հեշգեեէ ու ինքնըսիֆեան մեկուսացումի եւ մահուան կը դասապարտուի:

Եկեղեցիին բարեկարգումը էական պահանջի է: Կաչէլ իրեւ թէ աւանդական սկզբունքներու եւ ժամանակի բնական հոսքին դէմ ստեղծել պահպանողական ուղղութիւն մը՝ նոյնիսկ վնասակար է. վասնզի յառաջադիմութեան կասեցումը տկարութեան եւ անկառղութեան նշան է, որ կ'ընդարմացնէ Եկեղեցիին աշխոյժ եւ կենսահաղորդ կեանքը ու գինի կը գրկէ մարդկային հասարակութեան մէջ կեանքը Տիրոջ ներկայութեամբ ինքասաւորող եւ Անոր փոկարար խորհուրդին մասին վկայութիւն տուող իր հիմնական առաքելութենէն:

Աղանդաւորներու եւ աղանդաւորական շարժումներու բազմացումը՝ իրենց բոլոր երանգաւորումներով, Եհովայի վկաներէն մինչեւ Մունականներուն ներխուժումը Եկեղեցւոյ դաշտն ներս, պահական չէ, եւ սխալ է այս երեւոյթը վերագրել միմիայն ներկայի բաղկական եւ տնտեսական ճգնաժամերուն: Աղանդաւորներու բազմացումը նաեւ եկեղեցւոյ գործօն ներկայութեան պակասը եւ իր կղերին ամլութիւնը կը մատնանշէ:

Եկեղեցին իր հոգեւորականաց դասով եւ աշխարհականաց լայն մասնակցութեամբ պէտք է իր կարելիցն, օգնող եւ բարեգործ հեղինակութիւնը զգալի դարձնէ ընկերային կեանքի բոլոր ընագաւառներուն մէջ:

Այսօրուան կրօնը միայն ներհայեցողականը չէ, այլ նաեւ գեղաձանգաղէս գործնական-հովվականն է: Հովուական չէ նշանակեր ծուխի մը ընդամէնը ծիսական-արարողական պահանջները գոհացնել: Բառն ինքնըսիֆեան կը յուշէ արդէն, որ խօսքը հօր պահելու, պահպանելու, խնամելու, զարգացնելու եւ, ի վերջոյ, առաջնորդելու մասին է:

Եկեղեցին պէտք է իր նուիրաբեսական եւ ծիսական դրուածով բացուի դէպի մեր ընկերութեան եւ հասարակագի բոլոր շերտերը: Եկեղեցւոյ նուիրաբեսութիւնն իր հեղինակութիւնը թէ Եկեղեցիին եւ թէ մարդկային ընկերութեան մէջ կրնայ դրականաբէս արդիւնաւորել միայն ծառայութեան ճամբով, զոր գեղաձանգաբէս ուղղուած պէտք է ըլլայ դէպի մարդոց առօրեայ կեանքը՝ իր ընկերային-հասարակական, նիւթական-բարոյական, հոգեկան եւ ֆիզիկական բոլոր ոլորտներով:

Տնտեսութեան պարտադրող հանընդհանրացումի եւ աղանդաւորներու բաշխիչ գործունէութեան դէմ այսօրուան կրօնին մեծագոյն դերը պիտի ըլլայ Եկեղեցւոյ ծառայասիրութիւնը ուղղել ամբողջաբէս իր հոսի ջղուն առօրեային գործադրութեան, աղքատութան, հիւանդութան, բարոյական անկումներու, արտագաղթի, վաղուան գոհութեան, երկրի ու պետութան աղագային հանդէպ ստեղծուած համաստած անվստահութեան, նոր սերունդի դաստիարակութեան եւ այլ մարգերուն մէջ:

Եկեղեցիին նուիրաբեսութիւնը, իր նիթական եւ բարոյական կարելիութիւններէն որեւէ մեծ միջոցներ յատկացնէ կղերականաց նոր սերունդներ հասցնելու գործին, իցիւ թէ կարենայ արձանագրել այն բարեբեր արդիւնքը, զոր ստոյգ պիտի ունենայ, եթէ երբեմ իր գործունէութան եւ մասնաւոր առաքելութան դաշտին մէջ համաստասխան տուչութեամբ մը նեռգաւէ աշխարհական տարը:

Այս պարագային տուչութան կան Եկեղեցւոյ անունով լիազօրուած ըլլալու պահը կարեւոր պիտի նկատուի, որպէսզի Եկեղեցւոյ եւ իր աշխարհական տարի միջեւ մեծագոյն դերը պիտի ըլլայ Եկեղեցւոյ ծառայասիրութիւնը ուղղել ամբողջաբէս իր հոսի ջղուն առօրեային գործադրութան, աղքատութան, հիւանդութան, բարոյական անկումներու, արտագաղթի, վաղուան գոհութեան, երկրի ու պետութան աղագային հանդէպ ստեղծուած համաստած անվստահութեան, նոր սերունդի դաստիարակութեան եւ այլ մարգերուն մէջ:

Եկեղեցիին նուիրաբեսութիւնը, իր նիթական եւ բարոյական կարելիութիւններէն որեւէ մեծ միջոցներ յատկացնէ կղերականաց նոր սերունդներ հասցնելու գործին, իցիւ թէ կարենայ արձանագրել այն բարեբեր արդիւնքը, զոր ստոյգ պիտի ունենայ, եթէ երբեմ իր գործունէութան եւ մասնաւոր առաքելութան դաշտին մէջ համաստասխան տուչութեամբ մը նեռգաւէ աշխարհական տարը:

Այս պարագային տուչութան կան Եկեղեցւոյ անունով լիազօրուած ըլլալու պահը կարեւոր պիտի նկատուի, որպէսզի Եկեղեցւոյ եւ իր աշխարհական տարի միջեւ ծառայական սեռ կաղը, որ տրամադրուած է ընկերային հասարակագին, նաեւ իր հոգեւոր եւ գաղափարախօսական լեզուն արտայայտութիւնը գտնէ Քրիստոսի Անձին եւ Իր հասատած փրկագործական խորհուրդին մէջ:

Բարեգործութիւնը եւ ընկերային հասարակագին մէջ գործօն դեր ունենալը մեր Եկեղեցւոյ կարեւորագոյն նուաճումներէն մին եղած է Դ դարուն Մեծն Եռեսս Հայրապետի կաթողիկոսութան օրերուն: Եթէ Եկեղեցին, տակաւին այդ վաղ ժամանակաշրջանին, Հայաստանի ընկերային-հասարակական կեանքին մէջ յաջողաղէս կազմակերպած չըլլար իր բարեգործական հասատութիւններ, հիւանդանոցներ, ծերանոցներ, անկելանոցներ, աղքատախնամը եւ ընդհանրապէս ծեռ չմեկնէր ընկերային կեանքին լուսանցքը մղուած մարդոց, դժուար թէ ընդամէնը դար մը տեւող այդ կարճ ժամանակամիջոցի ընթացքին հրատարակուած հայ սրտին եւ մտակոյթին մէջ այնքէս խոր ու ամուր տարածած, իսկ իր տունկը հեթանոս հողին վրայ այնքիսի ճոխութեամբ ընձիւղած ըլլար, որ հիչ եթէ սասանութիւն բռնի կրնաձիգութեան դէմ ազգովին ընբոստանար, եւ ի խնդիր հրատարակական հատատին եւ հիմնութեան պատարագութեան յանձնառու ըլլար նահատակութեան:

Եկեղեցին իր ընդերին խորերը կը պահէ իր հաւատին անաղարտ պատարը, որ միշտ կրնայ բխիլ իր Ս. Աւետարանի եւ առաքելութեան զուլալ ակունէն: Որեան ալ բարդացած բուի այսօրուան կեանքը իր նիւթական պայմանաւորուածութիւններով, եւ հիչեան ալ խրթին ու պատասխանատու ըլլան վաղուան մարտահրաւէրները, ան իր հոգեւոր պարունակին մէջ կրնայ մտանորոգ կենսունակութեամբ վերտեղծել այն ուժականութիւնը կրել կարենալու համար նաեւ այս եւ գալիք ժամանակներուն բերած ծանրածանր խաչերը՝ ի խնդիր մարդկային ընկերութեան մէջ ասուածային շունչի ներկայութեան, հոգեւոր եւ բարոյական դրուածի, խղճի եւ սրբարոյր ամրումներու պահպանութեան:

Արդարեւ, հոս է, որ Եկեղեցին, իր հոգեւորական եւ ազգային պատասխանատուներու գիտակից, հաւաքական եւ ծառայողական առաքելութեամբ, իր յուսադրիչ ներկայութիւնը եւ իր հոգեւոր բարոյական հեղինակութիւնը հրամայական եւ նոյնիսկ անփոխարինելի պիտի դարձնէ հոն, ուր տնտեսական եւ քաղաքական բարդութիւնը ընկրկած է, խիղճին ձայնը մարդոց սիրտերուն մէջ տկարացած է, հաւատին թռիչը խոնարհիլ, սիրոյ հուրը անթեղել եւ յոյսին դէպի վաղուան բոցավառ արշալոյսը աղօթիլ սկսած են:

Ոչ այլ մարդկերս հասատութիւն մը, այլ մեր միաձնէջ եւ ասուածկաղոյց, մեր տառապած, մարդիրոսացած, հաւատի բաղում վկայութիւններով պսակուած, ազգի լուսոյ խորան Եկեղեցիին է սեղուտ պարտականութիւնը, իր կենսայոյզ երակներէն սնուցանել իր հայկազուն հօր այն երկնային եւ հոգեւոր սնունդով, որով այսօրուան անկարելին վաղը կը դառնայ կարելի, անեռեակայելին երեւակայելի, իսկ անհաւատալին սոյդ իրականութիւն:

Իր ծառայասիրական կերոին մէջ, անցեալի փառապանծ իրագործումներուն եւ երդոյ հազարամեակի մարտահրաւէրներուն ընդառաջ գացող մեր Եկեղեցին իր հոգեւորական եւ աշխարհական ուժերուն անխիթ եւ հաւասար մասնակցութեամբ, կրնայ ներբափանցել մարդոց առօրեային մէջ, ու անոնց ծանր մտահոգութեանց սեղանին դնել վերազարթնի ադրող եւ հիներուն մէջ միշտ նոր իր կոչումն ու դիմագիծը՝ իրեւ ազգային հիմնութան խարխիւ, միասնութան ռահվիրայ, հոգեւոր գեղագոյն արժէք, բարոյական հեղինակութիւն եւ աղագայի մթութեան մէջ փարոս մը սոյդ կողմնորոշի:

Այսպէս, թող Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին, 1700 տարիներու իր անցեալի նուիրականութան եւ արբութան բարձունքէն հսկէ հայոց իր փոքր ածուին վրայ, ու մերթ նախանձախնդիր, մերթ խանդակաթ սրբութան մայր՝ իր գոգը առաջնորդէ իր սիրասուն զաւակները:

Արէլ հեղ. **ՕՂԼՈՒԳԵԱՆ**
Ժնեւ



ՀԵՆՐԻԿ ՍԻՐԱՎԱՅԱՆ. «ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ» (1972)

Ավարայրի ճակատամարտի 1550-ամյակը

ԱՎԱՐԱՅՐԻ ԼՈՒՍԱԲԱՑԸ

Սկիզբը՝ էջ 3

Պարսից զորավարը տեղեկացավ, որ հայոց զորի զգալի մասը չէր կարողացել անցնել Տղմու գետը, իսկ ոմանք էլ սակավին գտնվում էին լեռնահովիտներում: Նա հրամայեց, որ փղերի եռամկները մտցնեն պատերազմի դաշտ: Յուրաքանչյուր փղի եռտեւից գալիս էր երեք ձգար սպառազեն, որոնց շրջաղաշմամ մեջ հայտնվեցին Վարդան Մամիկոնյանն ու իր գինակիցները: Եղիշեն գրել է. «Կորոնվի Վարդանն իր խաչ նիգակակիցներով մեծ կոտորած արեց այնտեղ, ուր եւ հենց ինքն էլ արժանի եղավ սանալու կաչարյալ նահատակության պսակը»:

Ճակատամարտը երկարեց եւ ավարտվեց երեկոյան դեմ: Մարտադաշտը ծածկված էր բազմաթիվ դիակներով: Պարսից կողմը, որ երեք անգամ ավելի էր հայոց կողմից, ավելի քան երեք անգամ շատ սպանվածներ տվեց: Ծանր ու տխուր էր տեսարանը, եւ ինչպես եղիշեն է գրել, «Ո՜չ թե մի կողմը հաղթեց, եւ մյուս կողմը պարտվեց, այլ խաչերը խաչերի դեմ դուրս գալով՝ երկու կողմերն էլ պարտություն կրեցին»:

Հայ Առաքելական Եկեղեցին, այն ժամանակից սկսած, Ավարայրի ճակատամարտում (451 թ.) հերոսաբար զոհվածներին դասեց հայրենիքի, հավատի եւ ազգի պաշտպանությանն իրենց կյանքը պարգեւած հրատոնյա սուրբ նահատակների շարք Վրթանես կաթողիկոսի կողմից դեռեւս IV դարի 30-ական թվականներին սահմանված կարգի համաձայն: Նրանց հիշատակի օրը մշվեց եկեղեցական տոների մեջ՝ Սբ. Վարդանանց անունով:

Ավարայրի լուսաբացի ճառագայթները հասան մինչեւ Արցախի ազատամարտը, եւ մերօրյա նահատակների հիշատակն սպասում է Հայ Առաքելական Եկեղեցու սրբերի շարք դասվելու շնորհաշատ կանոնացմանը:

Սբ. Վարդան զորավարի զոհվելուց հետո աղուսամբական ուժերը պատսպարվեցին ամրոցներում: Երիտասարդներն ու կույսերը, տղամարդիկ ու կանայք, ծերերն ու երեխաները, շրջակրկելով թշնամու առջեւ, թողեցին իրենց բնակավայրերը եւ հեռացան Հայոց լեռների անառիկ վայրերը: Ելիշեի դիպուկ բնութագրմամբ «Ամեն մարդ ինքն իր մեջ եկեղեցի էր, եւ նույն ինքը հահաա. յուրաքանչյուր մարմին Սուրբ սեղան էր, եւ նրանց հոգիները՝ ընդունելի պատարագ»:

Ավարայրի բոցը չէր մարել: Հայոց աշխարհի մեծ նախարարների տոհմերից շատերն ամրացել էին Միջնաշխարհի, Խաղտիքի, Տմորիքի, Արցախի բերդերում եւ ամրոցներում: Պարսից զորքերը, նոր ուժեր սանալով, սկսեցին հարձակումներ գործել, սակայն Միջնաշխարհի ամրոցների պաշտպանները ջախջախեցին թշնամուն:

Տմորիքի ամրոցներում գտնվողները, որոնք տեղեկացել էին թշնամու ջոկատների չարագործությունների մասին, հաջաբար դուրս ելան եւ հուժկու հարվածներով կործանեցին ու փախուստի մատնեցին նրանց: Թշնամին Խաղտիքի կողմից եւս հարվածներ ստացավ:

Երբ ոսոխը Տայքում երկու գյուղերի եկեղեցիներն այրեց, եւ փորձեցին ամրոցներում պատսպարվածներին գերեվարել, հայ նախարարները ջախջախիչ հակահարված տվեցին. մի մասին ոչնչացրին, իսկ մնացյալին դուրս վռնդեցին երկրից: Այս հաղթանակը ձեռք բերվեց ծանր կորուստ գնով. Վարդան Մամիկոնյանի եղբայրը Հմայակը, կռվելով անձնազոհ քաջությամբ, նահատակվեց հանուն միաբանության Սուրբ Ուխտի:

Արցախի ամրոցների եւ անառների մեջ գտնվողները դիմադրում էին թշնամուն եւ միեւնույն ժամանակ անընդհատ լուր ուղարկում Հոնաց երկիր հորդորելով հոներին գրոհել պարսից զորքերի վրա՝ հիշեցնելով դեռեւս Վարդան զորավարի կենդանության օրոք հայերի հետ կնքած դաշինքը: Հոների մի մեծ զորք հարձակվելով հասնում է մինչեւ պարսից տերության սահմանները, ավերում մի շարք շրջաններ եւ բազմաթիվ գերիներ տանում այնտեղից: Դարձով նրանք «հայտնատես ցույց տվին թագավորին այն միաբանությունը, որ ունեին հայոց գնդի հետ»:

Հայերի համառ դիմադրությունը պարսից արքա Հազկերտին սիրտը հաշվել այն մտի հետ, որ անհնար է կոտրել նրանց կամը եւ Հայաստանը վերածել մի հասարակ մարզպանության: Պարսից արքունիքը, երկյուղելով հայոց նախարարներից, սկսեց վարել կեղծավոր քաղաքականություն, որը հայերին սիրաշահելու միտում ուներ: Հայաստանի մեջ մնացած եղիպտոսներին թույլատրվեց սանձնել իրենց իշխանությունը, կատարել աստվածպաշտության բոլոր կարգերը եւ շինականներին ու եկեղեցականներին վերադառնալ ու տեր կանգնել իրենց ունեցվածին: Հազկերտն իրեւ թե նեռեց հարկերը, ինչպես նաեւ բռնությամբ մոգություն ընդունածներին հրավիրմամբ տվեց վերսին վերադառնալու հրատոնեությանը: Ջերբակալված Հովսեփ Հողոցմեցի կաթողիկոսի փոխարեն Հայոց կաթողիկոս դարձավ Աղբիանոսյան տոհմից Մելիսե Ա Մամազկերտացին (452-456):

Շատերը վերադարձան իրենց տները, իսկ նախարարները, որոնք ամրացել էին Հայոց աշխարհի բերդերում կամ էլ գտնվում էին օտարության մեջ, «իբրեւ տեսան երկի շենանալը, մանավանդ եկեղեցու հասատությունը, նրանք էլ ներկայացան պարսից արքային»: Այստեղ էր, որ եւս մեկ անգամ բացահայտվեց Հայաստանի հանդեպ Հազկերտի վարած հաղթական քաղաքականությունը: Կամավոր կերոով Հայաստանից եկած նախարարներին նա ողբայաքաղ պահեց գերեվարված հոգեւորականների հետ եւ այնուհետեւ նրանց բոլորին էլ բազում չարչարանքներից հետո հեռավոր ասորի ուղարկեց:

Ծանր էր ասորված հոգեւորականների ու նախարարների վիճակը: 454 թ. հեռավոր ասորի մեջ նահատակության պսակն ընդունեցին Հովսեփ Հողոցմեցի կաթողիկոսը, Թաթիկ եւ Սահակ եռիսկոպոսները, Ղեւոնդ, Սուտե, Սամուել երեցները եւ Քաջաջ ու Աբրահամ սարկավագները:

Եղիշեն գուրգուրանքով է նկարագրել նաեւ երանելի առաքիչների, կալանավորվածների ու պատերազմի մեջ նահատակվածների կանանց: Երկարաեւ փորձություններ եւ տառապանքներ կրելուց հետո տարիներ անց, պարսից գերությունից ողջ մնացած նախարարները վերադարձան հայրենիք:

Սբ. Վարդանանց պատերազմից տասը տարի անց, որոնք Սովսես Սանգկերեացու (456-461 թթ.) հաջորդը, Հայոց աշխարհի կաթողիկոսական աթոռ բարձրացավ Գյուտ կաթողիկոսը (461-478 թթ.) Տայք նահանգի Արահեզ գյուղից: Սահակ-մեսրոպյան կրսեր սերնդի աշակերտներից էր Գյուտ Արահեզցին, որի օծվելը խորհրդանշում էր ազգային հողի վրա Հայ Եկեղեցու պահպանումը եւ հարատեւումը:

Հայրենիքի եւ հավատի ազատության վեհ գործին իրենց կյանքն անմնացորդ պարգեւեցին Սուրբ Վարդանանց նահատակության պսակը կրող հայ զորականները եւ հոգեւորականները, որոնց հրատոնակոչ հնչնաթաղարագը լուսավորված էր հազարամյակների խորից ճառագող հայկյան ազատասեր ոգով եւ իմաստավորված ոսկեդարյան հոգեւոր զարթոնքով:

ԷԴՈՒԱՐԴ ԴԱՆԻԵԼՅԱՆ
Պատմ. գիտ. դոկտոր

ՀԱԷՈՑ ՀԱԷՐԵՏԻՔԸ

Սկիզբը նախորդ համարում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ ԵՎ ՆՐԱ ԴԵՐԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայաստանը, ինչպես նշեցինք, գտնվում է Ասիայի հարավարևմտյան մասում՝ Առաջավոր Ասիայում, սակայն իրեր բերումով, դեռևս հնագույն ժամանակներից սկսած, վերածվել է Եվրոպան և Ասիան իրար կապող կամրջի և դարձել միմյանց շաղկապող մայրուղիների խաչմերուկի: Բնական է, որ աշխարհագրական նման հարմար դիրք ռազմավարական առանձնահատուկ կարևորություն է հաղորդել Հայաստանին նոպաստելով, մի կողմից, երկրի տնտեսական զարգացմանը և նրա արդյունավետ մասնակցությանը համաշխարհային տարանցիկ առևտրում, սակայն, մյուս կողմից, Արևմուտք-Արևելք բախումների ժամանակ երկիրը դարձել էր, բառիս իսկական իմաստով, մի կռվախնձոր, պատերազմների թատերաբեմ: Շնորհիվ իր լեռնային անառիկ դիրքի՝ Հայաստանը տիրապետող ռազմավարական առավելություն է ձեռք բերել իր հարևանների նկատմամբ: Եվ քանի դեռ Հայոց թագավորությունը հաղթականաբար կայուն էր եւ ռազմականաբար բավականաչափ ուժեղ, Հայաստանի աշխարհագրական դիրքը մեծապես նոպաստում էր հայ ժողովրդի՝ Առաջավոր Ասիայում ունեցած դերի եւ կբի մեծացմանը եւ ծնում էր աշխարհակալական միանգամայն արդարացված ձգտումներ: Հայկական լեռնաշխարհի ռազմավարական կարևոր դերը մեծապես նոպաստում է Վանի թագավորությանը եւ Տիգրան Մեծի տերությանը՝ վերածվելու Առաջավոր Ասիայի գերիգոր պետություններ: Շնորհիվ հենց իր ռազմավարական դիրքի Հայոց թագավորությունը մի քանի դար շարունակ կարեւոր նշանակություն է ձեռք բերում Արեւմուտք-Արեւելք մրցապայքարում վերածվելով Հռոմից եւ Պարթեւստանից հետո Առաջավոր Ասիայի երրորդ ուժի:

III դարի վերջերից սկսած՝ Հայաստանը լայնորեն ներառվում է ավանդական հարաբերությունների ոլորտ, որ վկայում է երկրի հասարակական-տնտեսական զարգացման մեծ առաջընթացի մասին, սակայն ավանդական հասուկ մի շարք հոգեբանական գործոններ, որոնք ուժեղացնում են հանդես գալիս, ինչպիսին երկրառակչական պայքարն է, անջատողական ձգտումների ուժեղացումը, բնանտեսության օրավուր խորացման հետեւանքով երկրի ռազմական ու տնտեսական թուլացումը, որը պարարս հող է ստեղծում արտաքին ուժերի համար՝ Հայաստանի ներքին գործերին միջամտելու: Հայաստանի ռազմավարական տեղադրությունը, որ տիրապետող դիրք է ստեղծում հարեւան երկրների նկատմամբ, պատճառ է դառնում, որ սկզբում Հռոմը եւ Պարթեւստանը, իսկ այնուհետեւ Հռոմը եւ Սասանյան Պարսկաստանը դիմեն ամեն մի միջոցի նրան տիրելու: Հայաստանի համար քաղաքական ծանր հարված է լինում դեռ մ. թ. ա. IV դարում Փոքր Հայքի թագավորության առաջացումն ու անջատումը միասնական երկրից, որը նշանակալիորեն չլաստում է մնացյալ տարածքում ձեւավորված Մեծ Հայքի թագավորության ուժերը: Արդեն մ. թ. ա. II դարում Փոքր Հայքը միացվում է Պոնտոսի թագավորությանը, իսկ շատ չանցած նվաճվում Հռոմի կողմից դեռ մի որոշ ժամանակ պահպանելով անվանական թագավորությունը: Մեծ Հայքի թագավորությունը երկար ժամանակ հաջողությամբ խուսանավում է երկու հզոր տերությունների մրցապայքարում ձեռք բերելով մի կացություն, երբ Հայոց թագավորության դիրքորոշումից է առավելապես կախված լինում այս կամ այն տերության՝ մյուսի նկատմամբ հաջողության հասնելը:

Սկզբնաղբյուրների քննությունը ցույց է տալիս, որ Առաջավոր Ասիայի հզոր տերությունները հակառակորդի նկատմամբ բացահայտ առավելության հասնելու նոպատակով ձգտում էին տիրել Հայաստանի ամբողջ տարածքին, սակայն ոչ Հռոմը եւ ոչ էլ Պարթեւստանը կամ վերջինիս հաջորդած Սասանյան Պարսկաստանը բավարար ուժ չունեցան Հայաստանն ամբողջությամբ նվաճելու համար. քաղաքականապես եւ ռազմականաբար թուլացած Մեծ Հայքի թագավորությունը 387 թ. բաժանվեց Հռոմի եւ Պարսից թագավորության միջեւ: Ցավոք, քաղաքական նման կացությունը, որ պահպանվեց հետագա դարերում, ծանր հետեւանքներ ունեցավ հայ ժողովրդի պատմական ճակատագրում՝ թույլ չտալով միասնաբար հանդես գալու օտար զավթիչների դեմ:

Առանձնապես ծանր եղավ հայ ժողովրդի համար թուրք-պարսկական տիրապետության շրջանը: Թե Օսմանյան կայսրությունը եւ թե Սեֆեյան Պարսկաստանը Հայաստանին ամբողջությամբ տիրելու անհաջող փորձերից հետո ստիպված էին համաձայնության գալ եւ երկիրը բաժանել միմյանց միջեւ, որովհետեւ նրանց ռազմական, նյութական եւ մարդկային կարողությունները գրեթե հավասար էին: Հայաստանը 1555 թ. Ամասիայի եւ 1639 թ. Կասրե-Շիրինի հաշտությունների բաժանվեց նրանց միջեւ: Օսմանյան կայսրությանն անցավ երկրի արեւմտյան մեծ հատվածը, որն սպացավ Տաճկահայաստան (Թուրքահայաստան) եւ Արեւմտյան Հայաստան, իսկ արեւելյան համեմատաբար փոքր հատվածը՝ Պարսկաստանին, որն սպացավ Արեւելյան Հայաստան կամ Պարսկահայաստան անվանումը:

XVIII դարից սկսած այսկոչվածյան երկրներին տիրելու լուրջ եւ համառ քայլեր է ձեռնարկում Ռուսաստանը: 1801 թվից սկսվեց Արեւելյան Հայաստանի Ռուսական կայսրությանը միացնելու գործընթացը, որը հիմնականում ավարտվեց 1826-1828 թթ. ռուս-պարսկական եւ 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմներում ռուսական զենքի տարած հաղթանակների շնորհիվ: Ռուսական ցարիզմը հայ ժողովրդի բարեկամը չէր եւ նվաճելով Այսկոկվասը (ռուսական նվաճումից հետո ավելի հայտնի է Անդրկովկաս անունով) ու Արեւելյան Հայաստանը (որը Ռուսաստանը իրենաբերաբար Անդրկովկասի մաս հռչակեց)՝ բնավ էլ շահագրգռված չէր հայկական տարրն ուժեղացնելու հարցում: Ռուսաստանի նոպատակն էր նվաճել նաեւ Արեւմտյան Հայաստանը, բայց առանց հայերի, անդրեփհրայան կոզակություն հաստատելու համար: Այսուհանդերձ իրադարձությունների հետագա բնական զարգացումը ցույց տվեց, որ Արեւելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին հայ ժողովրդի կյանքում մեծ կարեւորություն ունեցող պատմական իրադարձություն էր: Պարսկահայերի եւ արեւմտահայերի՝ դեռի Ռուսաստանի տիրապետության տակ անցած Արեւելյան Հայաստան գաղթի շնորհիվ ձեւավորվեց էթնիկական ամուր միջուկ, որը 1918 թ. մայիսյան հերոսամարտի շնորհիվ ծնունդ տվեց Հայաստանի առաջին հանրապետությանը: Վերջինս ընդամենը երկու եւ կես տարի անց ընկավ Քեմալական Թուրքիայի եւ Խորհրդային Ռուսաստանի հարվածներից, սակայն կրկին այդ էթնիկական միջուկին ենք պարտական, որ 1920 թ. ծնվեց Հայաստանի երկրորդ հանրապետությունը՝ Հայկական ԽՍՀ-ն, իսկ 1991 թ. վերականգնվեց Հայաստանի քաղաքական անկախությունը ի դեմս Հայաստանի երրորդ հանրապետության:

Հայ ժողովրդի համար ծանր հետեւանքներ ունեցան 1895-1896 թթ. կոտորածները Արեւմտյան Հայաստանում, որին զոհ գնաց շուրջ 300 հազար հայ: Սակայն անհամեմատ ավելի դաժան ճակատագիր ունեցավ արեւմտահայությունն Առաջին աշխարհամարտի տարիներին՝ 1915-1916 թթ.: Հայերի ցեղասպանությունը Մեծ եղեռնին զոհ գնաց ավելի քան մեկ ու կես միլիոն հայ, իսկ Արեւմտյան Հայաստանը հայաթափվեց: Հայ ժողովուրդը կարող էր փյունիկի պես վերածնվել, եթե կենսագործվեր Սեւրի օգոստոսի 10-ի պայմանագիրը, որով Հայաստանի հանրապետությանն էր միացվելու շուրջ իննսուն հազար քառակուսի կմ տարածք Վանի, Բիթլիսի, Երզրումի եւ Տրապիզոնի վիլայեթներից, եւ հանրապետությունը դեռի Սեւ ծով ելք էր ստանալու Տրապիզոն-Ռիզե հատվածում, սակայն Սեւրի պայմանագիրն այդպես էլ մնաց թղթի վրա, իսկ հայ ժողովրդին սպասում էին բազմաթիվ նոր փորձություններ:

Այսօր Հայաստանի հանրապետությունը եւ փաստական գոյություն ունեցող հայկական երկրորդ պետությունը Լեռնային Ղարաբաղի (Արցախի) հանրապետությունը գրաղեցնում են Հայաստանի պատմական տարածքի ընդամենը տասը տոկոսը:

Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԷՎԹԱՆԱԶԻԱ. ՍՊԱՆՈՒԹՅՈ՞ՒՆ, ԹԵ՞ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Գերադիականացած աշխարհում այսօր ավելի ու ավելի հաճախ կարելի է լսել էվթանազիա տարօրինակ հնչողություն ունեցող բառը, որը բոլորին չէ, որ ծանոթ է: Այն էլ՝ երբ ովքեր լսել են **էվթանազիայի** մասին, խորապես չգիտեն՝ ի՞նչ է դա:

Մարդիկ այնքան են մեծամտացել, որ բավական չէ ապրում են ինչպես ուզում են՝ հագուստ պալով յուրաքանչյուր ցանկության ու կրքի, նաեւ որոշում են իրենց մահվան ժամանակը:

Արդ, ի՞նչ է էվթանազիան: Էվթանազիան մահացու հիվանդի կյանքը բժշկական միջամտությամբ դադարեցնելն է: Փորձառություն ունեցել եմ տեսնելու ե՛ւ մահամերձների, ե՛ւ մահացու հիվանդությամբ տառապողների: Տպավորություններն իրոք շատ ծանր են. այդ մարդկանց դեմքերը, անտանելի ցավերին չդիմացող մարմնի ջղաձգումները, տնոցները ու աղաղակները դեռ երկար ժամանակ ուղեկցում են քեզ: Սակայն կա էական տարբերություն մեռնող մարդու եւ այն հիվանդ մարդու միջեւ, ով գիտի, որ շուտով՝ թերեւս մի քանի կամ էլ մեկ ամսից մահանալու է: Առաջինն արդեն մոտ է իր ավարտին եւ լսում է մահվան հրեշակի ձայնը, մինչդեռ վերջինը պետք է սպասի, որ հանկարծահաս հիվանդությունը բջիջ առ բջիջ քանդի ու իսպառ ավերի իր առողջությունը: Յուրաքանչյուր րոպե լցվում է տառապանքով. անցյալն ու ներկան ցավերի մեջ իմաստավորվում են յուրովի: Ուրախությունները չէ, որ հիշվում են, այլ առավելապես թերացումները, սխալներն ու մեղքերն են մեկը մյուսի հետեւից հերթ կանգնած՝ գրոհում պարսված ուղեղի վրա, իսկ երջանիկ պահերի վերհիշումն անասելի ցավ ու ափսոսանք է առաջացնում մարդու մեջ: Ահա այս վիճակում վերջը դառնում է բաղձալի, մահը՝ երանելի: «Դանակ տվե՛ք՝ սպանեմ ինձ», «Վե՛րջ տվեք իմ տառապանքներին», «Մի՞թե ես ձեր մեղը չեմ գալիս», «ՓՐԿԵ՛Ք ինձ, աղաչում եմ»:

Բոլորն են տառապում՝ ե՛ւ հավատացյալը, ե՛ւ անհավատը, բայց. անհավատը տառապում է կրկնակի: Կյանքն ու մահը, երջանկությունն ու տառապանքը ի սկզբանե միահյուսված են: Ո՞րն է սկիզբը՝ կյա՞նքը, թե՞ մահը, եւ ո՞րն է վերջը՝ մա՞հը, թե՞ կյանքը: Ո՞րն է սահմանը երջանկության եւ տառապանքի միջեւ, կա՞ն արդյոք անխառն տառապանք ու երջանկություն: Մարդկությունն այս հարցի պատասխանները վաղուց գիտի, եւ նրա խոսնակներից Դոստոեւսկին իր «Դեւեր» վեպի մեջ հանճարեղորեն է ներկայացնում այս ճշմարտությունը. «Կյանքը ցավ է, կյանքը վախ է, եւ մարդը դժբախտ է: Հիմա ամեն ինչ ցավ եւ վախ է: Հիմա մարդը կյանքը սիրում է, որովհետեւ ցավն ու վախն է սիրում»:

Անկախ հավատալիքներից եւ կրոնական պատկանելությունից՝ պետք է ճիշտ հասկանալ տառապանքի իմաստը: Տառապանքը մարդու համար է, եւ տառապում են բոլորը:

Ժողովրդական իմաստնության համաձայն՝ կյանքում չաղաշխարած մարդը դաժան մահ է ունենում, իսկ արդարը՝ բարի: Այստեղից էլ՝ «լավ մահ» եւ «հեշտ մահ» արտահայտությունները: Տառապանքն ինքնին եւ հատկապես մահվանից առաջ տրվող տառապանքն աստվածային նշան եւ ապաշխարության խորհուրդ է: Ոչ ոք մեզ այնքան չի սիրում, որքան Աստված: Եվ այն սերը, որ մենք հատուցում ենք Աստծուն, փշրանք է:

Արդ, մահացու հիվանդությունը պետք է ընդունվի իբրեւ մեզ՝ մարդկանց, Աստծուց տրված ապաշխարության եւ դարձի վերջին փորձ: Երբ առողջ ենք, մշտապես ինչ-որ բան ունենք անելու, որեւէ տեղ շտապելու, որեւէ կիսաս գործ ավարտելու եւ հետեւաբար միշտ ժամանակ չունենք աղոթելու, ինքնամփոփվելու, գեթ մի պահ կանգ առնելու... ժամանակ չունենք ժամանակ գտնելու:

Մարդկությունը դարեր շարունակ մեկ առ մեկ իր կյանքից վերացրել եւ փորձում է վերացնել ամեն տեսակի տառապանքները: Բացառություն չէր նաեւ մահվան տառապանքը....

Շարունակությունը՝ էջ 8



ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ. «ՎԻՇՏ» (1961)

ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆԱՆՔ

Փետրվարի 22-ին Հայոց Եկեղեցին նշեց սուրբ Վարդանանց նվիրված տոնը: Լրացավ Ավարայրի ճակատամարտի 1550-ամյակը:

Հայերս մեր պատմության ընթացքում հաճախ ենք պայքարել մեր ազգային ինքնության ու հավատի պահպանման համար: Այդ տեսակետից հինգերորդ դարը շրջադարձային նշանակություն ունեցավ երկու խոշոր իրագործումով: Առաջինը հայոց գրերի գյուտն էր, որ հոգեւոր զենքի ուժ ունեցավ, իսկ երկրորդը՝ Վարդանանց հերոսամարտը:

Հայերիս ազատասեր ոգու ակնառու դրսեւորումն արձանագրվեց 451 թվին՝ Ավարայրի ճակատամարտում, որը մեր ժողովուրդը, Սուրբ Վարդան զորավարի գլխավորությամբ ու Ղեւոնդ Երեցի գործուն աջակցությամբ, մղեց պարսիկների դեմ՝ քրիստոնեական հավատի պահպանման եւ հայրենիքի ազատության համար:

Իր պատմության գրեթե բոլոր դարերում Հայոց Եկեղեցին եղել է հայրենիքի ազատության, ազգային արժանապատվության ու հավատի զորացման հզոր «մարտիկը», այսինքն՝ միշտ գործել է հանուն հոգու եւ մարմնի, հանուն ազգի հոգեւոր եւ ֆիզիկական պաշտպանության:

Ավարայրում հայ ժողովուրդը հակառակորդի դեմ հանդես եկավ միասնական, համախմբված, միածայլ ու միակամ: Այդ օրերին ժողովրդի բոլոր խավերի կյանքի նշանաբանը դարձավ «...գիտակցված մահն անմահություն է» համոզմունքը: Ու բոլորը՝ տինական թե ռազմիկ, հոգեւորական թե նախարար, այր թե կին, Ավարայրում աներկբայորեն նվիրաբերեցին իրենց կյանքը՝ ընդունելով նահատակությունը, որն անմահության պսակն է:

... Ու նաեւ այդ ինքնազոհողության արգասիքն է այն, որ այսօր՝ Ավարայրից շատ դարեր անց, կանգուն են Հայոց երկիրն ու Հայ Եկեղեցին:

ԱՂՈԹՔ

Պատարագ է խորախորհուրդ,
Ու հնչում են «Տեր ողորմյան»,
«Հայր մերը» սուրբ.
Աղոթում է եկեղեցում այս հին ու նոր
Ժողովուրդը հավատավոր:

Մատուցվում է սուրբ Պատարագ,
Ու հնչում են Մայրավանքի
Նորանորոգ որմերի տակ
Սուրբ բառերը «Հավատամքի»:

Խնկաբույրը տարածվում է,
Ոգիս լցնում կենաց լույսով.
Հոգիս ինձնից անջատվում է
Ու վեր ելնում լույսի միջով:

Մոմի դողդոջ լույսի ներքո
Շշնջում են խոսքեր, խոսքեր...
Փառաբանում Տիրոջն անվերջ
Մայր ու որդի՝ ծնկած կողքի:

«Առ Քեզ հղած աղոթքը մեր
Այս սուրբ վայրից թող ելնի վեր,
Պարուրվելով խնկաբույրով,
Բարձրանա ու հասնի Քեզ, Տեր»:

ԳՈՌ ՆԱԶԱՐՅԱՆ

ՀԱՆ Ի՞ԼԱՒԿ

Մի գմբեթ է բարձրիկ ու լայն,
Շինված անույշ ու անգերեւ,
Կանթեղներ ունի լուսավառ՝
Անվառելիք ու անոթարան:
(ազնտոռ 'յդվիյզ)

Այն ի՞նչ գունդ է անդունդում,
Որ ոչնչվում անդադար,
Ստեղծում է ու ճանդում՝
Իր համար ու մեզ համար:
(ամիյզ)

Մտակումը՝
ՅՈՒՐԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ

«ՍԻՐՈ ՄՈԼՈՐԱԿԻ» հարցը. ԻՆՉ է մտերմությունը:

Պատասխանել են Երեւանի «Էլիտա» հեղինակային դպրոցի սաները:

Մտերմությունն անբաժանելի զգացում է: Մտերիմ լինել ինչ-որ մեկի հետ նշանակում է սիրել նրան, օգնել դժվար պահերին, վստահել գաղտնիքները: Մտերմությունը մարդուն դարձնում է ավելի բարի ու սրտացավ դիմացինի նկատմամբ:

Քրիստինե Գեւորգյան (12 տ.)

Եթե դու մտերիմ ընկեր ունենաս, ապա երջանիկ կլինես: Մտերիմ ընկերը երբեմ-երբեմ չի թողնի անհաջողության մեջ, ինչպես կարող է՝ կօգնի: Նա միշտ քեզ հավատարիմ կլինի: Երբ ինչ-որ մեկի հետ մտերիմ ես, նրան ամեն ինչ վստահում ես, արտահայտում ես քո զգացմունքները, պատմում ես քեզ հուզող դեպքերը, եւ նա քեզ խորհուրդ է տալիս: Նա, ով մտերիմ ընկեր ունի, երբեմ-երբեմ տխուր չի լինում: Իսկ նա, ով մտերիմ ընկեր չունի, միշտ տխուր է լինում, քանի որ չկա մեկը, ում կարող է վստահել իր հուզմունքը:

Մանվել Ներսիսյան (12 տ.)

«ՍԻՐՈ ՄՈԼՈՐԱԿԸ» ՄԵԿ ՏԱՐԵԿԱՆ է

Ճիշտ մեկ տարի առաջ «Սիրո մոլորակն» սկսեց իր պտույտները՝ խոստանալով լինել քո բարեկամը, քո ուրախի բարեկամը: Թե ինչ չափով դա նրան հաջողվեց պարզ չէ. մի բան հաստատ է, որ մեկ տարվա ընթացքում նրա «բնակիչների» թիվը զգալիորեն աճել է: Ճիշտ է, մեր «մոլորակը» փոքրիկ է, բայց դա չի նշանակում, թե նա չի ընդունի նոր բնակիչներ: Բոլորի համար միշտ տեղ կգտնվի: Երբեմ մի՛ մոռացիր, որ նա շատ հյուրընկալ է ինչպես իսկական բարեկամը: Այնպես որ, մի՛ հապաղիր նրան վստահել քո մտքերը, առաջարկները, ցանկությունները, երազանքներն ու... շնորհները:

Տարելիցի առթիվ՝ ջերմ շնորհավորանքներ «Սիրո մոլորակի» բոլոր բնակիչներին՝ թե՛ հին, թե՛ նոր. նաեւ՝ բարի նորամուտ...



ԻՎԵՏԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ (14 տ.)

ՏԱԹԵՎԻԿ ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆ (11 տ.)

ՋՈՒԼԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ (9 տ.)

ԱՐՄԱՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ (14 տ.)



ԳԵՎՈՐԳ ԴԱԶԱՐՅԱՆ (10 տ.)

«ՍԻՐՈ ՄՈԼՈՐԱԿԸ» ՆՐԱ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ

Էջի պատասխանատու՝ ԱՆՆԱ ԱԼՈՅԱՆ

ԷՎԹԱՆԱԶԻԱ. ՍՊԱՆՈՒԹՅՈ՞ՒՆ, ԹԵ՞ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Սկիզբը էջ 6

Ջեկ Գեւորգյանն առաջին բժիշկն էր, ով գործածության մեջ դրեց էվթանազիան: Նրա «օգնությամբ» 1990-1999 թթ. կյանքից հեռացավ 21-ից 89-ը տարեկան ավելի քան 130 հիվանդ: Վերջերս 69 հանգուցյալների վրա կատարած փորձերը ցույց են տվել, որ նրանց միայն 25 տոկոսն է մահացու հիվանդ եղել: «Նյու Ինգլանդ Ջորնալ օֆ Մեդիսին» հեղինակավոր պարբերականի հրատարակած տվյալների համաձայն՝ հետազոտված 69 հանգուցյալից 17-ը 6 ամսից ավելի կյանք չէր ունենա, 5-ն ընդհանրապես ֆիզիկապես հիվանդ չի եղել, 29 տոկոսը տառապել է քաղցկեղով, իսկ 38 տոկոսը՝ Լու Զերհիգսի հիվանդությամբ:

Շատ երկրներում էվթանազիան նկատվում է որպես բեռական հանցագործություն: Բայց գնալով շատանում են այն երկրները, որոնք բարյացակամ են տրամադրված այս երեւույթի նկատմամբ: Այսպես. ճապոնիան թույլատրում է հիվանդին էվթանազիայի ենթարկել այն ժամանակ, երբ արձանագրվում է ուղեղի մահը: Այս ուղղությամբ ավելի առաջ անցած էայլը 2000 թ. նոյեմբերի 28-ին Հոլանդիայի խորհրդարանի կողմից էվթանազիայի օրինականացման նախագծի ընդունումն էր:

Այս խնդիրը մեծ աղմուկ առաջացրեց: Եկեղեցիները եւ քրիստոնեական կազմակերպությունները միաբերան դատապարտեցին էվթանազիայի գաղափարը՝ քրիստոնեական տեսանկյունից որակելով այն որպես անհեռելի մեղք եւ հայհոյություն Սուրբ Հոգու դեմ: Շատ եկեղեցիներ իրենց պատշաճական դիրքորոշումն արդեն արահայտել են այս խնդրի առնչությամբ: Ռուս եկեղեցու կենսաբժշկական եկեղեցա-հասարակական խորհրդի հրատարակած պատշաճական հայտարարության մեջ ասվում է. «Խորհուրդը դեմ է էվթանազիային՝ իր բոլոր արտահայտություններով, որովհետեւ դրա գործածությունն անխուսափելիորեն կհանգեցնի բժշկության բեռականացմանը եւ առողջապահական ինստիտուտի հանդեպ հասարակական վստահության կորստին, մարդկային կյանքի անգին շնորհի պղծմանը, բժշկի արժանիքների նսեմացմանը եւ նրա մասնագիտական պարտականության այլասերմանը, բժշկագիտության զարգացման տեմպերի, մասնավորաբար՝ վերակենդանացման մեթոդների, ցավազրկող դեղերի եւ անդարմանելի հիվանդությունների բժշկման եղանակների մշակման նվազեցմանը. դա կնդասի հասարակության մեջ ցինիզմի, հիթլերիզմի տարածմանը եւ ընդհանրապես բարոյական եսնահանջին, որն անխուսափելի է «մի՛ սպանիր» պատվիրանի կատարումից հրաժարվելիս»:

Պատշաճական Վատիկանը նույնպես գտնում է, որ մահացողի նկատմամբ ճիշտ է «հոգեւոր եւ մարդկային օգնություն» ցուցաբերելը, քան թե «պարտության» ընդունումը, որը տանում է դեպի անհուսություն եւ էվթանազիա: Հռոմեական եկեղեցին էվթանազիան որակում է իբրեւ «հանցագործություն կյանքի եւ մարդ անհատի հանդեպ»:

Հորդանանի Հուսեին թագավորը կյանքից հեռացավ հենց էվթանազիայի միջոցով, թեեւ այդ մասին զանգվածային լրատվամիջոցներով շատ չի տեփորահարվում: Կան նաեւ հակառակ օրինակներ. Ա-ՄՆ-ի նախկին նախագահ Ռոնալդ Ռեյգանը տառապում է Ալզգեհմերի, իսկ Հովհաննես Պողոս Բ պապը՝ Պարկենսոնի հիվանդությամբ, սակայն երկուսն էլ խոնարհաբար տանում են իրենց տառապանքները: Իսկական քրիստոնյայի նկարագիր ուներ նաեւ հանգուցյալ Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը, որն անմռունչ դիմացավ իր անտանելի ցավերին եւ խոնարհվեց Աստծո անհնին կամքի առջեւ:

Էվթանազիայի առանցքում մահն է, որը որակվում է որպես սպանություն (բժիշկների եւ կամ հարազատների որոշմամբ) եւ ինքնասպանություն (հիվանդի որոշմամբ եւ խնդրանքով): Այն անընդունելի է թե՛ բարոյական, թե՛ էթիկական, թե՛ մարդկային եւ թե՛ քրիստոնեական տեսանկյուններից: Պետք է հասկանալ եւ ընդունել, որ կյանքը մարդուն ծնողներից փոխանցված, բայց միայն Աստծուց տրված սուրբ պարգեւ է, եւ սրբապղծություն ու հայհոյություն է մարդկային կամքով կյանքին վերջ տալը: Մենք չենք որոշել մեր ծնունդը, հետեւաբար եւ մենք չէ, որ պետք է ճշտենք մեր մահվան ժամը: Քրիստոսն ասում է. «Ես եկա, որպեսզի կյանք ունենաք եւ՝ առավել եւս ունենաք» (հմմտ. Հովհ. ժ 10):

Տ. Վազգեն աբգ. ՆԱՆՅԱՆ

ՄԱՆԿԱԾՆՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՐ ՀԱՄԱՐ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ

«Բայց նա պիտի ապրի որդեծնության համար» (Ա Տիմ. Բ 15):

Մանկածնությունը բնական երեւույթ է, բնության պահանջ ընդհանուր եւ մարդու, եւ կենդանիների համար: Սակայն Պողոս առաքյալը կնոջ մասին ասում է, որ նա կփրկվի որդեծնության միջոցով, այսինքն երեխաներ ծնելու միջոցով կարող է Աստծուն հաճելի լինել եւ երանություն ստանալ հանդերձյալ կյանքում: Ինչո՞վ է նա արժանի այդ շնորհին, երբ մանկածնությունն իմքին, իբրեւ բնության պարգեւ, ոչ առաքինություն է, ոչ էլ ծառայություն:

Ի դեպ, միշտ չեն օրինակներ, երբ մայրերը եւ՝ այդպիսի օրինակներից ամենավսեմը Աստվածամոր ծննդյան տոնի իրողությունն է: Նազարեթում ապրում էր հրեական մի ընտանիք բաղկացած ամուսնուց եւ կնոջից, որոնց անուններն էին Հովակիմ եւ Աննա: Նրանք երեխաներ չունեին եւ հավանաբար անհայության մեջ էլ պիտի մեռնեին, ինչպես Մեսիայի Քրիստոսի հայտնությանն սպասող մյուս հրեաները: Բայց հիսնամյա ամլությունից հետո Աննան դուստր ծնեց ամենօրհնյալ Մարիամին, որի ծննդյամբ ոչ միայն իմն անձամբ փրկություն ստացավ, այլեւ սկիզբ ծառայեց մեր փրկությանն:

Ինչպե՞ս է երեխաների ծնունդը մոր համար փրկության միջոց դառնում: Սրան պատասխանում է առաքյալը. «Եթե պարկեշտությամբ մնա հավատի, սիրո եւ սրբության մեջ» (Ա. Տիմ. Բ 15):

Երեխաների նախնական դաստիարակությունը մոր պարականությունների մեջ է մտնում, իսկ դաստիարակությունն այլ կերպ չպիտի լինի, եթե ոչ հավատի ու բարոյականության ոգով: Ինչպիսի՞ հավատ պիտի ներեշչի, ինչպիսի՞ աղոթքներով մայրը պիտի կրթի իր երեխաներին, երբ իմն անձամբ անհավատ է կամ անգետ, թե ինչի՞ պետք է հավատալ: Արդյոք կարո՞ղ է հասատել երեխաներին սիրո օրենքների մեջ այն հրեսոնյա մայրը, որը մաքուր սեր չունի ոչ ամուսնու, ոչ ընտանիքի, ոչ էլ մերձավորների նկատմամբ, եւ եթե սիրում է երեխաներին, առա բնազդային սիրով, նրանց սնուցելու եւ առողջությունը պահպանելու իմաստով: Կարո՞ղ է արդյոք մայրը նրանց ստերում բնակեցնել ամոթխածության զգացումը եւ հրաժարումն այն ամենից, ինչ դատապարտելի է, երբ նա ամեն ինչին թեթեւամտորեն է նայում, միայն հաճույքների եւ ուրախությունների մասին մտածում, նույնիսկ արարքներ թույլ տալիս, որոնք դատապարտվում են յուրաքանչյուր օրինավոր միջավայրում, եւ որոնք անխուսափելիորեն խռովության եւ գայթակղության առարկա են դառնում իր ընտանիքում: Գայթակղությունները վարակիչ են, իսկ մայրական գայթակղությունները երեխաների համար անդիմադրելի: Բայց, ինչպես երբեմն հիմար սովորությունների մասին ասում են, որ դրանք մայրական կաթի հետ են սնուցվում, այդպես էլ բարի հատկությունները, սուրբ ձգտումները այնքանով են հաստատուն լինում, որքանով որ խորն են արմատավորվում հոգում մանկությունից սկսած: Հայրերն ու մայրերն իրենք անձամբ պետք է լինեն լավը, հավատացյալ, սիրող, ազնիվ, որպեսզի երեխաներին իրենց նմանությամբ դաստիարակեն, որպեսզի նրանց դաստիարակության համար պարգեւներ ակնկալեն:

ԱՐԱ ԲԵԲՐՅԱՆ. «ԱՇՏԱՐԱԿ» (1960)

Ինչո՞ւ Հովակիմն ու Աննան Ամենասուրբ Աստվածամոր ծնողները լինելու պատվին արժանացան: Որովհետեւ արդար եւ առաքինի էին: Երեխաներից զրկված լինելը ծանր փորձություն էր նրանց համար: Բայց նրանց հավատքը չեկարացավ, նրանք իրենց ամլության վերացման համար մի տարի, երկու տարի չէ, որ աղոթում էին, այլ հիսուն տարի: Մի անգամ Աննան այգում ծառի վրա, պատահաբար մի բույն տեսավ՝ մեջը ծվարած ձագերով: Նա տխրեց, որ թռչուններն էլ են՝ ձագերով ուրախանում, մինչդեռ իմը չի ճանաչում այդ մխիթարությունը: Մեկ ուրիշը նրա փոխարեն կսրտնջար Աստծու նախախնամության դեմ, բայց Աննան նաեւ այդ պահին արցունքներով ու աղոթքներով Աստծուն դիմեց, որ Նա վերցնի իրենից անզավակության անարգանքը:

Այդ ժամանակ նրան հայտնվեց հրեշտակը եւ ավետեց, որ շուտով նա մայրանալու է: Իսկ թե որքան բարեգործ էին նա եւ իր ամուսինը, բավարար կերպով ցույց է տալիս նրանց կողմից պահպանված սովորությունը, ըստ որի նրանք իրենց ունեցվածքի մի մասը եկեղեցական կարիքներին նվիրաբերեցին, իսկ մյուսը աղքատներին:

Եթե առաքինի կյանքը իմքին հաճելի է Աստծուն, ապա ի՞նչ կարող է նրա արժանավորության վրա ավելացնել երեխաների ծնունդը: Ամեն ինչ կախված է նրանց դաստիարակությունից: Ինչպես որ ծնողները, նույնիսկ եթե իրենք բարի են եղել, կարող են սարսափելի պատասխանատվության տակ ընկնել իրենց երեխաների հանդեպ ցուցաբերած անուշադրության, նրանց արտաքորության, նրանց ուղղման հանդեպ անհոգության համար, որի օրինակը Եղիա Թիշբացին է՝ հանդիսացող մեզ համար: Բայց նրանց հավատքը չեկարացավ, նրանք իրենց ամլության վերացման համար մի տարի, երկու տարի չէ, որ աղոթում էին, այլ հիսուն տարի: Մի անգամ Աննան այգում ծառի վրա, պատահաբար մի բույն տեսավ՝ մեջը ծվարած ձագերով: Նա տխրեց, որ թռչուններն էլ են՝ ձագերով ուրախանում, մինչդեռ իմը չի ճանաչում այդ մխիթարությունը: Մեկ ուրիշը նրա փոխարեն կսրտնջար Աստծու նախախնամության դեմ, բայց Աննան նաեւ այդ պահին արցունքներով ու աղոթքներով Աստծուն դիմեց, որ Նա վերցնի իրենից անզավակության անարգանքը:

Այդ ժամանակ նրան հայտնվեց հրեշտակը եւ ավետեց, որ շուտով նա մայրանալու է: Իսկ թե որքան բարեգործ էին նա եւ իր ամուսինը, բավարար կերպով ցույց է տալիս նրանց կողմից պահպանված սովորությունը, ըստ որի նրանք իրենց ունեցվածքի մի մասը եկեղեցական կարիքներին նվիրաբերեցին, իսկ մյուսը աղքատներին:

Եթե առաքինի կյանքը իմքին հաճելի է Աստծուն, ապա ի՞նչ կարող է նրա արժանավորության վրա ավելացնել երեխաների ծնունդը: Ամեն ինչ կախված է նրանց դաստիարակությունից: Ինչպես որ ծնողները, նույնիսկ եթե իրենք բարի են եղել, կարող են սարսափելի պատասխանատվության

Ռուսերենից թարգմանեց
Տ. Գեւորգ աբեղա Մարոյանը

ԽՐԱԻՆՐ. ԱՌԵՐ ԱՐՄԱՎԵՆԻ

Քանի որ արմավենին հիմնականում աճում է Աֆրիկայում եւ Հարավային Ասիայում, ուստի որպես խորհրդանիշ լայն տարածում չի ունեցել:

Հին եգիպտոսում արմավենին համարվում էր պտղաբերության եւ աստվածների առատաձեռնության խորհրդանիշ, իսկ ծարտարապետության մեջ արմավենու նմանությամբ կառուցված սյուները Կենաց Ծառի խորհուրդ են ունեցել: Հունական ավանդությամբ արմավենին խորհրդանշել է փառքի հաղթական բարձունք, եւ նրա կանաչ ճյուղերով դիմավորել են պատերազմներից հաղթանակով տուն դարձածներին: Հիշենք նաեւ, որ երուսաղեմ մտնելիս Հիսուս Քրիստոսին ելս դիմավորեցին արմավենու ճյուղերով:

Քրիստոնեության մեջ արմավենին՝ իր ուղղորդ եւ ուղղաբերձ բնի, մշտապես դեպի երկինք ձգվող ոստերի, ինչպես նաեւ քաղցր պտուղների շնորհիվ, համարվում է ընտրյալների խորհրդանիշը, այն անձանց, ովքեր երկնքի Արքայության օրհնությունն ունեն, ովքեր բարձունում են հոգու շնորհների մեջ:

Հայ Եկեղեցու հայրերի խորանների մեկնություններում արմավենին համարվում է գիտության բարձրացում, երկրից բարձրացող ճշմարտության եւ Կույս Մարիամի խորհրդանիշը, որ տվեց իր քաղցր Պտուղը՝ Հիսուսին, ճշմարտություն, որ «երկրից բուսավ դեպի հրեշտակների վերին կարգերը՝ ծայրարձակելով կանաչ սաղարթներով եւ քաղցր պտուղներով լցնելով հավատի տունկը, որոնցով երկինք են ելնում հավատացյալները»:

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության եւ քարոզչության կենտրոն
Գլխավոր խմբագիր՝ Աստղիկ Սամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցե՝ ք. Վաղարշապատ, Ս. Գայանե եկեղեցի, Քրիստոնեական դաստիարակության եւ քարոզչության կենտրոն
հեռախոս՝ (0+31) 56780
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան
Ստոր. է տպագր. 2. 03. 2001 թ.
Տպաքանակը՝ 2500 Գինը՝ 50 դրամ: